

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և Նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Ելեկտրոնային տարբերակները կայթում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утρ илжүүлөрө - Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՍՈՒՐԵՆ ԽԱՆՅԱՆ



ՔՈ ԶԻՆՎՈՐՆ ԵՄ

Ս ՈՒ Ր Ե Ն Ի Ա Ն Ց Ա Ն

ՔՈ ԶԻՆՎՈՐՆ ԵՄ

Ստեփանակերտ
«ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒ» հրատարակչություն
2014

ՀՏԴ 891.981-8 Խանյան
ԳՄԴ 84Հ
Խ 256

Գիրքը տպագրվում է ԼՂՀ գրողների միության երաշխավորությամբ՝
Դայրենական Մեծ պատերազմի մասնակից, ճահատակ մարտիկ-
բանաստեղծ Սուլեն ԽԱՆՅԱՆԻ ծննդյան 92-ամյակի առթիվ։

Ժողովածուն կազմել, առաջաբանը գրել և խմբագրել է
Սուլեն ԽԱՆՅԱՆԻ կրտսեր եղբայրը՝ բանաստեղծ-գրականագետ
Սուլրատ ԽԱՆՅԱՆԸ։

Խանյան Սուլեն
Խ 256 Քո զինվորն եմ/ Սուլեն Խանյան.-Ստեփանակերտ:
Դիզակ պլուս, 2014.- 64 էջ+4 էջ ներդիր։

Ժողովածուն տեղ են գտել Սուլեն Խանյանի նամակները՝ ու-
ղարկված Սովետական բանակում ծառայելու ժամանակ, զորակոչվե-
լուց առաջ գրած բանաստեղծություններն ու նշակած հեքիաքները։

ՀՏԴ 891.981-8 Խանյան
ԳՄԴ 84Հ

ISBN 978-99941-2-956-0

© Խանյան Սուլեն, 2014

Առաջաբանի փոխարեն

ՏԱՍՆԻՆ ՆԱՄՅԱ ԻՄ ԱՎԱԳ ԵՂԲԱՑՐԸ

Սուրեն Խանյան... բանաստեղծ, մանկավարժ, ասմունքող, երաժիշտ... Կարելի է թվարկել նրա աստվածանվեր շնորհները ու միաժամանակ ավելացնել՝ դերասան, պարուսույց, նկարիչ...

Սուրենի այս կատարյալ կարողությունների մասին գիտեին ոչ միայն հայրենի գյուղում, այլև Յաղորուք շրջկենտրոնում, շրջանի գյուղերում ու Ստեփանակերտում, ուր մասնակցում էր մարզային տարաբնույթ օլիմպիադաներին և արժանանում գովասանքների:

Մեր ընտանիքի ավագն էր Սուրենը՝ ծնված 1922թ., Սուրենից հետո քոյրս էր՝ Օյան (1925թ.), ես (1930թ.), ապա մեր կրտսեր Եղբայրը՝ Արտաշեսը (1933թ.), ամենից փոքրը՝ քոյրս՝ Գրետան էր (1938թ.):

Ըստ սովորության, մեր գյուղում ծնողների հորը կոչում էին պապա, հորը՝ ապա, ավագ եղբորը նույնակես՝ ապա: Եվ որպեսզի «ապա» բառը շփոթություն չառաջացնի, հորը պարզապես կոչում էին ապա, իսկ ավագ եղբորը դեպքում «ապա» բառից առաջ հնչեցնում էին անունը: Այդպես մեր ավագ եղբորն անվանում էինք «Սուրեն ապա»:

Ուրիշ էր մեր Սուրեն ապան: Բարի քուն իմաստով նա «ապա» էր մեզ համար: Բանաստեղծություն էր անգիր անում, սովորեցնում էր նաև մեզ, հորդորում, որ տանն արտասանենք բոլորի առջև: Իսկ մեր տան մեծերը ոչ միայն հայրս ու մայրս էին, այլև մոլոս ծնողները՝ մեր մեծ պապն ու տատը: Մորս հայրը՝ հմուտ որմնադիր, դժբախտ պատահարով հաշմանդամ էր դարձել: Նա իմաստուն հեքիաթասաց էր: Նրան ուղղակի պաշտում էր մեր ավագ եղբայրը՝ Սուրենը ու խորհուրդ էր տալիս մեզ՝ լինել ուշադիր ու հոգատար մեծ պապի հանդեպ: Եվ այդպես էլ վարվում էինք: Ահա այդպիսի մբնոլորտում, երբ արտասանում էինք Սուրենի սովորեցրած բանաստեղծությունները, մեր օջախը թնդում էր ուրախության ու խրախուսանքի թևավլորո հորոդրմերով:

Եվ ոչ միայն այդ: Այն շնորհքը, որ շոշափելի իրողություն էր դարձնում Սուրենը, անպայմանորեն փոխանցում էր մեզ: Նա ինձ սովորեցրեց նկարել, ասմունքել, առավել ևս, նվագել մանդոլին, ապա և թառ, քիչ անց՝ սրինգ: Յետագա տարիներին ժողովրդական գործիքները դարձան իմ հոգեւոր աշխարհի մտերիմներն ու արտահայտիչները:

Իմ Սուրեն ապան աստվածաշնորհ բանաստեղծ էր: Ստեղծագործում էր նվիրումն, տպագրվում մարզային ու շրջանային թերթերում:

Եվ քանի որ նա իմ ուսուցիչն էր 4-րդ դասարանում, հետևում էր իմ ունակություններին, նկատել էր, որ ստեղծագործելու շնորհը ունեմ: 1940 թվականի գարնան մի օր նա մտավ դասարան և հայտարարեց՝ «Երեխաներ, կարո՞՞ղ եք, բանաստեղծություններ գրեցեք, շուտով կազմակերպվելու է շրջանային օլիմպիադա, իսկ հաջողության դեպքում կմասնակցեք մարզայիննեն»: Երկու օր անց ես ինչ-որ չափով ամաչելով, տանը դիմեցի նրան՝ «Սուրեն ապա, ես բանաստեղծություն եմ գրել, կարդա՞՞ք»: Նա ուրախացած ասաց. «Եհարկե՛ք, բեր, բեր կարդա՞մ»: Եվ նա կարդաց ու ցնծությամբ գրկեց ինձ և ասաց. «Ապրես, ախատերս, ես գգում էի, որ դու կարող ես գրել»: Նա կարդաց կրկին ու կրկին՝ այնպիսի բավականությամբ, ասես գտել էր երջանկության իր կարկաչուն աղբյուրի ակունքը:

Իմ առաջին բանաստեղծությամբ՝ «Ով է նվիրել» վերնագրով, 1940-ին մասնակցել եմ շրջանային, ապա մարզային օլիմպիադաներին: Այդ բանաստեղծությունը տպագրվել է «Խորհրդային Դարարադ» թերթում:

Մանկության տարիներիս իմ ուրախությունը՝ կապված ավագ եղբորս հետ, երկար չտևեց: 1941թ. ապրիլի 10-ին ներ տանն էին հավաքվել Քյուրաքաղի, Էդիլլուի (այժմ՝ Ուխտաձոր), Ջախուլլուի (այժմ՝ Ջարթաշեն) և մեր Աղբուլաղ (այժմ՝ Ակնաղբյուր) գյուղերի 18-ը լրացած տասնյակ երիտասարդներ, ովքեր ավարտել էին միջնակարգը, ինչպես նաև Ջաղորութի մանկավարժական ուսումնարանը: Ջայրս այդ ժամանակ աշխատում էր Բաքվում: «Բարի երթի» երեկո էր կազմակերպել մայսս ու պատվիրել, որ Սուրենի բոլոր ընկերները հրավիրվեն այդ երեկոյին: Դա ապրիլի 10-ին էր: Գարնանային խաղաղ երեկո էր: Սեղանի շուրջ հնչում էր երգը, թեժանում պարը, իսկ նվագողներն իմ քերներն էին: Ի դեպ, մորս տոհմին անվանում էին Ղավալանց, այսինքն՝ երաժիշտների տոհմ:

Ապրիլի 11-ի առավոտյան ամբողջ գյուղը ճանապարհում էր կամավոր նորակոչիկներին: Ջաղորութ շրջկենտրոն տանող ճանապարհն անցնում էր մեր գյուղից վեր Գյոլ կոչվող աղբյուրի մոտով: ճանապարհողներից ոնանք ոգևորված էին, ոմանք ուրախ տրամադրությամբ, մայրեն արտասկրում էին, փարվում նորակոչիկ որդիներին, արտահայտում իրենց տագնապներն ու քնքշանքները: Տեսնելով մորս արցունքները՝ ես չկարողացա զսպել լացս, նետվեցի եղբորս գիրկը. թվում էր, թե աշխարհն է հեռանում մեզնից: Ին Սուրեն ապան ինձ ամուր սեղմեց կրծքին և ասաց. «Մի՛ լացիր, ախատե՛րս, երկու տարի անց վերադառնալու եմ ու դասավանդեմ ծեզ: Սոկրատ ջան, դու չքողնես բանաստեղծություն գրելը, կարես, շնորհըով ես, լսեցի՞՞ր»: Ես գլխով նշան արեցի, որ հաս-

կացա: Սակայն արցունքներս չկարողացա զապել: Գյոլ աղբյուրից նորակոչիկներին ճանապարհելուց հետո մորս հետ վերադարձանք տուն:

Օրերն անցնում էին ինչ-որ տագնապով, լարված: Թերթերն ազդարում էին Եվրոպայում գերմանական ֆաշիզմի սանձազերծած պատերազմի մասին: Մայրս հանգիստ քուն չուներ: Տատիկս ինչքան ամոքում էր նրան, խորհուրդ տալիս, որ հանգիստ մնա, չեղ ստացվում:

Օ՛, մայրական սիրտ, այդ ի՞նչ զգացում ունես, որ կրահում ես ներկան ու գալիքը...

1941թ. հունիսի 22-ին ամբողջ օյուղն զբաղված էր բերքահավաքով: Մենք՝ աշակերտներս, նույնպես օգնում էինք նրանց: Վաղ առավոտյան Յադրութ շրջկենտրոնից հաղորդեցին, որ Յիտլերյան Գերմանիան ուխտադրութ ներխուժել է Սովետական Երկիր՝ խախտելով խաղաղության պայմանագիրը: Մայրս հանկարծակի եկավ, ծնկները ծալվեցին, արտասուրի միջից արտաքերեց: «Սուրենս...»: Նա գիտեր, որ որդին ծառայում է Բելոռուսիայի սահմանում, Գերմանիայի սահմանից ընդամենը 17 կմ հեռավորության վրա: Եղբայրս երկու ամսվա ընթացքում հասցրել էր գրել 12 նամակ: «Պատերազմն սկսվելուց դադարում են եղբորս նամակները: Ինչ պատահեց նրա հետ՝ մնաց անհայտ: 1942-ին զինկունատից ստացանք իրար հակասող երկու «մուտք»: Մեկում ծնողներիս տեղեկացվում էր, որ Սուրեն Խանյանը գոհվել է հերոսաբար, մյուսում՝ համարվում էր անհայտ կորած:

Մայրս կյանքից հեռացավ 1970 թվականի մայիսի 24-ին՝ Սուրենի անունը շուրթերին: Յայրս ապրեց 97 տարի՝ մահկանացուն կնքելով 1988 թվականին: Գլխավերև միշտ Սուրենի մեծադիր նկարն էր: Տղամարդ էր, դիմանում էր:

Ես նշեցի, որ ավագ եղբայրս ինձ դասավանդել է 4-րդ դասարանում, որ նա է նշանառել ստեղծագործելու իմ շնորհքը և խրախուսել ինձ, որ նա է իմ հոգու մեջ արթնացրել արվեստի հանդեպ ունեցած իմ ընդունակությունները: Եվ պատահական չէ, որ ստեղծագործական իմ ճանապարհին երբեք չեմ մոռացել ավագ եղբորս, գրել եմ նրան նվիրված քնարական բանաստեղծություններ, բալլարդներ՝ շաղախված կարոտի և սպասումի անմարելի զգացումներով: «Պատահական չէ նաև, որ իմ առաջին հասուն բանաստեղծությունը՝ «Կիսատ երգը» խորագրով, տպագրվել է «Կոմունիստ» հանրապետական թերթի 1950-ի համարներից մեկում:

Յայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո ինչպես սովետական քոլոր գրողները, այնպես էլ ես գրում էի խաղաղության մասին՝ կոնկրետ անդրադառնալով ավագ եղբորս կերպարին:

Նման գործերից է «Մորս տենչը» բանաստեղծությունը, որտեղ ընդգծում են.

Ու կռվի մասին երք խոսք է բացվում,
Ասես խոցում են նուրբ սիրտը իմ մոր,
Նրա աչքերն են մշուշպում, բացվում,
Կորած ծամփան է հիշում իմ եղբոր:

1960թ. մի խումբ լրագրողների հետ Մոսկվայից այցելել էինք նախ Հունգարիա, ապա՝ Ավստրիա: Դանուր գետի ափին գոեցի հետևյալ բանաստեղծությունը՝ նվիրված ավագ եղբորս.

Դանուր, դու իմ Արաքսի քույր,
Քեզ շատ եմ երգել,
Խնդրում եմ քեզ, պատասխան տուր,
Ճեռվից եմ եկել:

Իմ եղբորը դու չե՞ս տեսել՝
Զահել, գամգրահեր,
Սինչն հիմա տուն չի հասել,
Սպասում ենք դեռ:

Վերջին անգամ գրել էր նա,
Որ փրկվել ես դու,
Գովերգում էր սիրով անմար,
Աչքերդ կապուտ:

Նրա վերջը սրտիդ վրա,
Ասա իմձ՝ չկա՞,
Լուր տուր, Դանուր, տամեմ նրա
Սիրած աղջկան:

Այս, եղբորս դու չե՞ս տեսել՝
Զահել, գամգրահեր,
Սինչն հիմա տուն չի հասել,
Սպասում ենք դեռ:

Բուդապեշտում եմ գրել նաև «Վարդեր» բանաստեղծությունը, որը հյուսված է հենց իմ ավագ եղբոր անցած արյունալի-լուսաբեր հետքերի տպավորությամբ:

Նշեմ նաև, որ ավագ եղբորս մասնակցությունը Մեծ Հայրենականին և նրա անհայտ ճակատագիրը խոր հետք են թողել իմ ստեղծագործա-

կան մղումների վրա, և այդ թեման կարևոր տեղ է գրավում իմ գրքերում: Այդ հանգամանքն է թելադրել ինձ՝ հրատարակելու իմ ժողովածուներից մեկը՝ «Սպասում Ենք դեռ» խորագրով: Այցելելով Վիեննա, իմ սիրտն անվերջ որոնումների թևով էր թօչում: Սովետական բանակի անցած հերոսական ուղին ու հայ ժողովրդի խիզախ զավակների մասնակցությունը այդ աշխարհափրկիչ մարտերին, ինձ հանգիստ չէին տալիս: Արդյունքում ճնշեց «Դերոսների հետքերով» շարքը՝ կազմված «Հանդիպում», «Սպասում Են Զեզ», «Դանուբի ափին», «Մաութիառզեն» բանաստեղծություններից:

Միլիոնավոր հայրենասեր զինվորների անձնուրաց պայքարի, նրանց նահատակվելու իրական պատմությունն է թելադրել ինձ՝ ստեղծելու հետևյալ գողտրիկ գործը՝ շաղախված եղբորս հանդեպ ունեցած անհուն կարոտի գգացումներով.

*Ավագ եղբայրս՝ քաջասիրտ զինվոր,
Վոլգայի ափին զոհվել է մի օր,
Ու մինչև հիմա սզվոր է մայրս,
Անհուն կարտուից հալվել է հայրս:
Իմ սրտում էլ է վիշտը վերք բացել,
Որ իմ եղբորից ավագ եմ դարձել:*

Ին «Լեռների երգը» ժողովածուն հաճելի արձագանք գտավ և ընթերցողների, և գրաքննադատների շրջանում: Գրախոսականներում առանձնապես ընդգծվում էր «Մորմորներ» շարքը: «Այրող հուշ» երգն անմիջապես անգիր էին արել տասնյակ ասմունքող աշակերտներ, ու մինչև հինահանդիսանում է ամենից ընդունված գործերից մեկը, որով ասմունքողները մասնակցում են մրցումներին և գրավում արժանի տեղեր:

Թեման իրական դեպք է: Մեր ընտանիքից պատերազմին մասնակցել են իինձ հոգի, որից երեք չեն վերադարձել, իսկ նրանց հագուկապից առանձին մասունքներ պահում էր տասու իր սնդուկի մեջ: Պատերազմի ավարտից հետո բացում ենք արդեն կյանքից հեռացած տատիս սնդուկը ու նոր հասկամում նրան:

*Երեք գլխարկ տեսանք այնտեղ,
Երեք սև թուղթ - երեք ցավ,
Երեք որդու կորուստն ահեղ
Մեր սրտերին ծանրացավ:
Մենք լաց եղանք հոնգուր-հոնգուր,
Վշտի արցունք հեղեցինք,
Նշխարները տատիս հոգու
Կրկին տեղը դրեցինք:*

*Օրերն ինչպես մարող մշուշ,
Անց են կենում ու գնում,
Սակայն որպես այրող մի հուշ,
Տատիս սնդուկն է մնում:*

Այդ շարքի մեջ են նտնում նաև «Կարոտի երգ», «Սերը նահատակ», «Այդպես մեծացանք», «Մորմոք», «Մայրեր», «Նրանց անունը», «Մոր կարոտն ու որդու սիրտը» բանաստեղծությունները: Գրականագետ Ա. Աբայանն իր «Լեռների երգը» գրախոսության մեջ նշել է. «Լավ է «Մորմոքներ» բաժինը, որտեղ պատերազմի մորմոքները, վերթերը նրբորեն են ցուցադրվում: Խանյանը շատ լավ է գրում կյանքը, ճարդկային հոգեաշխարհը: Ահա թե ինչու նրա բանաստեղծությունները (պատերազմը և նրա հետքերն արտացոլող) շատ քննույշ են, նրբորեն ասված («Այրող հուշ», «Կարոտի երգ», «Մորմոք», «Մայրեր» և այլն):

Անվանի գրականագետ Դ. Գասպարյանը «Գրական թերթի» 1973-ի օգոստոսի 24-ի համարում տպագրված իր գրախոսության մեջ ընդգծել է. «Ս. Խանյանի գրքում կա առանձին մի շարք՝ «Մորմոքներ» վերնագրով, ուր նա վերհուշի ձևով ներկայացնում է պատերազմական ժանր տարիների իրադարձությունները ու իրավիճակները: Քնարական հերոսի կյանքը դադարում է սոսկ ներկա, խաղաղ ու հանգիստ պահը լինելուց, այն ընդարձակվում է, իր մեջ առնում գրկանքներով լի անցյալը»:

1974-ին եղել են Վոլգայի ափերին: Այդ ժամանակ էլ ծնվել է իմ այս կարոտի երգը.

*Եղբայրս գոհվեց Վոլգայի ափին,
Սայրական սրտով արտասվեց Վոլգան,
Ճետո ծառս եղավ ուժով ահագին,
Որ խաղաղ-խաղաղ այս օրերը գամ:
Ճիմա շրջում եմ Վոլգայի ափին,
Զրերն են ինձ հետ մտերմիկ խոսում,
Եղբորս մահով փորորկված Վոլգան
Կարծես թե սրտիս միջով է հոսում:*

«Սպասում ենք դեռ» ժողովածուն երկար տարիների ընթացքում փորորկված ու շիկացած կարոտների ու սպասումների պոետական հանրագումար է: Նրանում գետեղված բանաստեղծությունները գրելիս աչքերիս առջև տեսիլքային պատկերով հառնում էր ավագ եղբայրս: Ես կարծես թե լսում էի նրա ծայնը, նրա խորհուրդները: Այդ ապրումների գործեր: «Կանչ» բանաստեղծությունն ավարտվում է այսպես.

*Ես էլ եմ հիմա վախենում, եղբայր,
Դողում եմ սրտով, դողում եմ հոգով,
Որ աչքս ճամփիդ ես էլ ծերանամ,
Երբեք չտեսած ժերությունը քո:*

1975-ին գրեցի կրկին «Սպասում ենք դեռ» վերնագրով բանաստեղծությունը, որն իմ հուզումնալից պահերի խտացումն եմ համարում: Գտնում եմ, որ այդ բանաստեղծությամբ ես արտահայտել եմ բոլոր նրանց ապրումներն ու խոհերը, ովքեր հարազատներ են կորցրել Մեծ Հայունականի տարիներին: Բանաստեղծությունը բերում եմ ամբողջությամբ.

*Այցելեցի մորս շիրմին,
Սորս՝ սրտիս կարոտն անմեռ,
Ասի՝ մայրիկ, որդիդ չեկավ,
Սպասում ենք դեռ:*

*Խոնարհվեցի հորս շիրմին,
Յորս՝ սրտիս սյունն աներեր,
Ասի՝ հայրիկ, որդիդ չեկավ,
Սպասում ենք դեռ:*

*Լուռ մոտեցա քրոջս շիրմին,
Քրոջս՝ հոգուս լույսը հուրիեր,
Ասի՝ քույրիկ, եղբայրդ չեկավ,
Սպասում ենք դեռ:*

*Ու մոտեցա պապիս շիրմին,
Տատիս շիրմին՝ պրբապատկեր,
Ասի՝ ձեր քաջ քոռը չեկավ,
Սպասում ենք դեռ:*

*Մենակ էի, մեկը չեղավ,
Գար, արցունքս սրտանց սրբեր,
Ասեր՝ եղբայր, մենք էլ քեզ հետ
Սպասում ենք դեռ:*

Հերոսական ու տագնապալից ճանապարհ անցած մեր ժողովուրդը, հիրավի, իմաստուն է: Անցյալը ներկային, ներկան՝ ապագային ծիածանելու բազմաթիվ երանգներ է գտել ու մարմնավորել վանքերի, եկե-

դեցիների, մատուռների, խաչքարերի, կամուրջների, ինչպես նաև հուշաղյուրների ձևով: Այս խորհուրդն է ինձ թելադրել իմ «Հուշաղյուրներ» բանաստեղծությունը, որն ավարտվում է այս տողերով.

Գիտեմք՝ ովքեր եք դուք,
Երբ եք վերադարձել,
Մեր հոգսերը կիսող
Զինակիցներ դարձել...
Բայց մենք՝ մահկանացու,
Դուք՝ հավերժի փոխված
Սերունդների սրտով
Դոսող հուշաղյուրներ,
Դերոսների լեզով
Խոսող հուշաղյուրներ:

Ահա այսպես, ավագ եղբայրս, որին Սովետական բանակի շարքերը ճանապարհեցին 1941-ի ապրիլի 10-ին, երազային աստղ դարձավ մեզ համար: Ես, որ 11 տարեկան էի, երբ «Բարի ճանապարհ» մաղթեցի նրան մանկական իմ արցունքի միջից, դարձել եմ 85: Ոչ մի րոպե չեմ դադարել նրա մասին խորհելուց: Նա մեկ այցելել է երազում, մեկ տեսիլքային պատկերով, մեկ էլ աստվածային հուսաժայտ տեսքով, ծիածանագույն ծիամքներով, եկել ու ծուլվել է իմ հոգուն, եռքյանը, կարոտներիս, սպասումներիս ու թևեր առել երգի փոխված, երգի ձայնով, սրտի թրիոներով:

Այս այրող կարոտն ինձ հանգիստ չի տվել երբեք: Նրա բանաստեղծություններից մի քանիսը 1973-ին ներկայացրել եմ ԼՂ գրողների բաժանումը: Այդ երգերը նոցվել են «Երդում» ժողովածուի մեջ, որը նվիրված է Հայրենական պատերազմում զոհված դարաբաղցի մարտիկ-բանաստեղծների հիշատակին: Այդ ժողովածուն (Խմբագիր՝ Գ. Աղաջանյան) ամփոփում է 15 բանաստեղծ-մարտիկների ստեղծագործությունները, ոչ միայն անգին նվեր էր հերոսներ ծնող մեր ինաստուն ժողովրդին, այլև երախտագիտության տուրք՝ մեր նահատակ եղայրների անմարում հիշատակին:

Ավագ եղբօրս բանաստեղծությունների մի փունջ էլ ներկայացրել եմ Երևան, Գրողների միություն: Բանաստեղծ Սասուն Գրիգորյանի խնբագրությամբ լույս տեսած ստվարածավալ գրքի մեջ գետեղվել է այդ փունջը: Այդ ժողովածուում զետեղվել են Մեծ Հայրենականում զոհված բանաստեղծ-մարտիկների երգերի շարքերը:

Մեծ Հայրենականում զոհվածների հիշատակը միախառնվելով ժողովրդի հավերժության գաղափարին ու գոյատևման իրողությանը, մի

նոր իմաստով ու վճռականությամբ դրսևորվեց Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտում, որը մեր նոր ազատամարտիկների կյանքի գնով պսակվեց հաղթանակով, փրկվեց ոչ միայն մեր պատճական սուրբ Արցախը, այլև հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը:

Կազմելով ավագ եղբօրս՝ Սուրեն Խանյանի սույն ժողովածուն, ես որոշել եմ վերլուծական գնահատականներ չտալ նրա ստեղծագործություններին: Այն թողել եմ ընթերցողին: Թող նա գնահատի այն նարտիկ-բանաստեղծի երգերը, որոնց հեղինակը նետվել է մարտի ընդամենը 18-ը նոր լրացած: Միաժամանակ խորհել եմ՝ եթե Սուրեն Խանյանը հնարավորություն ունենար շարունակել ստեղծագործական իր աշխատանքը, անպայման կդառնար հայոց նորագույն պոեզիայի աստղերից մեկը:

Խոսքն կցանկանայի ավարտել 1977-ին եղբօրս հիշատակին նվիրած իմ «Տասնութ տարում» բանաստեղծությամբ.

Տասնութ տարում

*Տղան նոր է ժայռում կյանքին,
Սակայն տասնութ տարում, եղբայր,
Քո ժայտը փոխվեց ցաման,
Ու նետվեցիր մարտի:*

Տասնութ տարում

*Տաքանում են սիրո իրից,
Իսկ դու, եղբայր, տաքացար լոկ
Կովի ահեղ կրակներից:*

Տասնութ տարում

*Սիրածին են
Գրկում ջերմին,
Սակայն երկու ձեռքդ պարզած,
Քո արյունով փրկված հողին
Դու փարզեցիր:*

Ահա այն խոսքը, որ թղթին հանձնեցի ավագ եղբօրս ժողովածուն տպագրելու առթիվ: Եվ մի՞թե դրանով կարող է սփոփել իմ սիրտը, սիրտ, որի երգը սկսվել է նրա կարոտի երանգով ու շարունակվում է առայսօդ:

*Սուլրատ ԽԱՆՅԱՆ
29-30 դեկտեմբերի, 2013թ.*

ՍՈՒՐԵՆ ԽԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՑ

1. Թանկագին մայր...

Ընդունիր որդիհական ջերմ բարևներս քեզ, պապուն¹, մեծ մամուն², Օյային³, Արտյուշային⁴, Գրետային⁵... Ես լավ եմ: Եկել եմ Բիլաջար, բայց թույլ չտվին գնալ Բաքու: ճանապարհին տեսա Լևոն⁶ ամուն, խնդրեցի, որ ապուն⁷ ինաց տա, որ գա Բիլաջար: Բայց առայժմ չի եկել:

12.04.1941թ.

- 1.Սորս հայրը՝ Յայրապետ պապին:
2. Մեծ մաման՝ Զինյար տատին:
- 3.Օյան՝ ավագ թույրը:
- 4.Արտյուշան-մեր կրտսեր եղբայրը:
- 5.Գրետան՝ մեր կրտսեր թույրը:
- 6.Լևոն ամին՝ հորս հորեղբոր թոռը:
- 7.Յայրս այդ ժամանակ ժամանակավոր աշխատում էր Բաքվում՝ որպես վարպետ հյուսն:



2. Թանկագին քույր Օյա...



Ընդունիր եղբայրական հեռավոր, կարոտալի բարևներս: Ես լավ եմ, անհանգիստ եմ ձեզ համար: Օյա, մենք ամսուս 12-ին եղանք Բալաջարում: Ես մի նամակ էի գրել Բալաջարից՝ տան հասցեով: Նամակում գրել եմ, որ ապուն չեմ տեսել, բայց նա- մակը փոստ գցելուց հետո ապան, Կոյլա բարան¹, Էմման², Քոլան³ եկել են Բալաջար, տեսել եմ, բոլորը լավ են: Մեզ թույլ չեն տալիս Բաքու գնալ:

Քոլան այնքան է չաղացել, որ էլ չեմ կարող ասել, մի տոննա կլինի: Օյա, իմ մասին բոլորովին չմտածեք, ես լավ եմ: Մեր օրերը միշտ կատակներով ենք անցկացնում: Եղիլլու ենթաշրջանից և Յաղորութից եկած վեց հոգուց երեքը հիվանդացել են: Բայց մենք լավ ենք, արխա- յին մնացեք: Մամուն ասա, որ բոլորովին չմտածի: Ձեզ պահպանեցեք մինչև գալս: Իսկ Պապուն⁴ աչքի լույսի պես կպահեք, եթե մի տիած բան լսեն, այստեղից չեմ վերադառնա, ենքան կպահեք, որ առօք-փա- ռոք հողին հանձնեք:

Էլ ինչ գրեմ: Բարևներ հաղորդիր Հրայրային, Օլիմպին, կրկնակի

բարևներ՝ Արևին, բարևներ՝ Վարդուշին, Ռոզային, Վոլոսյային, Խորենին, Գուրգենին և բոլոր քո ընկերներին⁵, որոնց չեմ ճանաչում, բարևներ մեր պրակտիկաներին՝ զույգ Զարելաներին:


Առաջմ, ճանապարհ ենք գնում:

Մնամ քո եղբայր՝ Սուրեն Խանյան:

15.04. 1941թ., ք. Ոլոսով:

- 1.Կոյսա բարա - մեր հորաքրոջ որդուն այդպես էինք անվանում:
- 2.Էմմա - մեր մորաքրոջ աղջկը, ապրում էին Բաքվում:
- 3.Թոյս - մորս հորեղբոր թունուին:
- 4.Պապան - մեր մոր հայրը: Յիշանդ էր, մենք էինք խնամում:
- 5.Օյսայի դասընկերները:

3. Օյսա, ընդունիր բարևներս...



Մենք այժմ գտնվում ենք Արևմտյան Բելոռուսիայի Բերյոզա քաղաքում: Առայժմ անհայտ է մեր մնալու տեղը: Միայն մենք գտնվում ենք Գերմանիայի հարյուր կիլոմետր հեռավորության վրա: Արխային մնացեք, ես լավ եմ: Բարևներ հաղորդիր բոլոր բարեկամներին:

Մնամ քո եղբայր՝ Սուրեն


21.04.1941թ.

Բերյոզա

4. Թանկագին քույր Օյսա...

Ընդունիր եղբայրական քաղցր ու ջերմ բարևներս... Օյսա, ես, Սեյրանը, Միսակը, Սերյոժան, մի խոսքով, այժմ մեր շրջանից մի կազարմայում 60 հայ ենք ապրում:

Ես ստացա քո գրած առաջին նամակը: Կարդալով, շատ ուրախացա: Լարձես թե քեզ մոտ էի: Մտքով սա-



վառնեցի հայրենի լեռները, շոջեցի այգիներով, փնջեցի ծաղկներ,
բայց ավա՞ղ, մարմինս հեռո՛ւ-հեռու է հայրենի ծաղկաստանից.

Սիրուն թշուններ, է՛յ, գարնան հավքեր,
Զեփյուռ ոգիներ, մայիսյան օրեր,
Սլացեք արագ, ինչպես վառվող հուր,
Իմ հայրենիքից բերեք ինձ մի լուր:
Այնժամ կգրկեմ, կհամբուրեմ ծեզ,
Կրացեմ հանդես, կրացեմ հանդես...

Քույրս, այժմ սուր է միջազգային դրությունը: Մենք այժմ օրական 12
ժամ աշխատում ենք, այնպես որ, ազատ ժամանակ չունենք, բայց ես
էի քեզանից շատ նամակ եմ գրում, թեպետ դուք ավելի շատ պետք է
գրեք: Տնից դեռ նամակ չեմ ստացել: Զգիտեմ պատճառն ինչ է...

Մենք այստեղ նամակով ենք ապրում, բայց դուք այդ չգիտեք: Ոչ
ոքից նամակ չեմ ստացել, բացի քո նամակից:

Քույր իմ Օյա, դա լավ է, որ ինձ խորհուրդ ես տալիս... Աչքիս վրա՝
պատվով կկատարեն քո պատվիրանը:

Օյա, այնպես արեք, որ տանը իմ բղթերը, բանաստեղծությունները
ցրիվ չտաք: Ել ինչ գրեմ, սրանից հետո հասցես կգրես այսպես.

БССР, Брестская область, п/п Комарка п/я 16, 1-ый, бот 1-
ый, 2/р, С. X.

Քո եղբայր՝ Սուրեն
23.04.1941г.


5. Թանկագին հայր և մայր...

Ընդունեք հեռավոր քաղցր, կարոտալի բարևմերս ծեզ, Պապուն,
Մեծ նամուն, Օյային, Սուկրատին, Արտյուշային, Գրետային և մեր բա-
րեկամներին:

Ես լավ եմ, ծեզ եմ կարոտում:

Սիրելի ծնողներ: Մենք ապրիլի 21-ին հասանք տեղ, Արևմտյան Բե-
լոռուսիայի Սրանչիցը քաղաք: Էղտե-
ղից ինչքան նարդ ենք եկել (15 հոգի),
բոլորս միասին ենք և ապրում ենք մի
ննջարանում, բոլորս էլ լավ ենք: Այժմ
գտնվում ենք ռազմական հագուստի
մեջ: Բոլորովին չմտածեք իմ մասին:

Ուտելն էլ ինչքան ասեք՝ կա, ինչ-



քան ուզում ես՝ տալիս են:

Գրեցեք տեսնեմ ինչպես է ձեր առողջությունը:

Ապա, գրիր տեսնեմ մահճակալ առա՞ն, թե չէ:

Սովորաբ, ինչքան կարողանում ես ռուսաց լեզուն լավ սովորիր: Աղբուլադից որ դուքս եկար, հայերենին հավասար պետք է ռուսերենն իմանաս:

Բարևներ հաղորդեք բոլոր հարևաններին:

Մասմ ձեր Սովորեն:

23.04.1941թ.

6. Բարևներ, Օհաննես ապա...¹



Ընդունեք հեռավոր բարևներս
քեզ, Տյուտային², Պապուն³, Ազուն,
Պուժուն⁴...

Մեզ այստեղ շատ լավ են պահում: Այնպես, որ կարող եք արխային մնալ:

Այստեղ դեռ ձյուն է, դեռ չի հալվել: Յաճախակի անձրևներ են լինում: Շատ ցուրտ է մեզ համար, որովհետև դեռ սովոր չենք: Մենք համարյա գտնվում ենք անտառի մեջ: Օդը շատ մաքուր է, ուրախ ենք:

Բարևներով՝ ձեր Սովորեն:

23.04.1941թ.


1. Օհաննես- մեր հորեղբայրը

2. Տյույյա- մեր Օհաննես հորեղբոր կինը

3. Պապան, Ազին- հոր կողմից մեր Խաչատուր պապը և Նարաք տատիկը

4. Պուժին- մեր հորեղբոր աղջիկը

7. Թանկագին քույր Օյա...



Ընդունեք եղբայրական հեռավոր բարևներս:

Օյա, առաժմ մենք դեռ իրացանի հետ գործ չունենք, միայն աշխատում ենք քայլել, խրանատ փորել, զանազան իրեր տեղափոխելու վրա: Առավոտյան ժամը 6-ին վեր ենք կենում, երեկոյան ժամը 12-ին քնում: Այնպես որ, այդտեղի երկար ու հանգիստ քունը մեռավ: Այժմ սովորում ու ընտելանում ենք նոր ռեժիմին, նոր կարգապահությանը: Ընդհանուր առմամբ, եթե ցուրտ չլինի, լավ կլինի:

Ին մասին շատ չմտածեք, միայն հաճախակի նամակ գրեցեք, որ ինձ անհոգ զգամ: Գրիր մեր ընտանիքի առողջության մասին:

Այժմ Գերմանիայի սահմանից հեռու ենք 17 կիլոմետր: Բարևմերով՝ ձեր Սուրբեն Խանյան:

28.04.1941թ.

BCCP, Брестская область, п/о Комарка, п/я N16.

8. Սիրելի ծնողներ...

Ընդունեցեք որդիական հեռավոր բարևներս ձեզ, Պապուն, Մեծ մամուն, Օյային, Սոլյուտին, Արտյուշային, Գրետային և բոլոր նրանց, ովքեր մեր բարին են ցանկանում:

Ես լավ եմ, միայն ձեզ համար եմ անհանգիստ:

Այժմ ձեզ հայտնի է իմ հասցեն, կարող եք հաճախակի նամակ գրել: Մեզ այժմ ներգրավել են իրածային հետիոտն գորամաս, բայց դեռ հաստատ չէ, կարող են փոխել ուրիշ գորամաս (իրանոթային)... Մենք այժմ ինչքան ասեք, այնքան չարչարվում ենք, վեր ենք կենում առավոտյան ժամը 6-ին, քնում երեկոյան ժամը 12-ին: Գրեցեք ձեր առողջության մասին:



Ել ինչ գրեմ, իմ փոխարեն մի անգամ ջերմ համբուրեք Գրետային:

Բարևեցեք Խաչի պապուն, Ազուն, Օհանես ապուն, Տյուտային, Պուտուն:

Այժմ գերմանական սահմանից հեռու ենք 17 կմ: Եթե դժբախտություն պատահի այդտեղ, հեռագիր կտաք, կգամ...

Բարևմերով՝ ձեր Սուրեն:

28.04.1941թ.

ԲՍՍԴ, Բրեստի մարզ, տ/Տ, IV 16 Կոշարկա:

9. Պատվարժան եղբայր Կոլյա...¹

Ընդունեք հեռավոր, անկեղծ բարևներ: Մենք 10 օր ճանապարհ կտրելուց հետո տեղ հասանք: Այժմ գտնվում ենք Պորուժանից 6 կմ հեռավորության վրա, իսկ գերմանական սահմանից՝ 17 կմ հեռավորության վրա: Այստեղ չափազանց ցուրտ է մեզ համար, ինչ եկել ենք, մի արևոտ օր չի եղել, միշտ ծյուն է և անձրև: Եթե ցանկանաք ինանալ մեր աշխատանքի մասին, կասեն հետևյալը: Առայժմ մեր օրերն անցնում են առանց հրացանի: Առավոտյան ժամը 6-ին վեր ենք կենում, նախաճաշից հետո անցնում ենք աշխատանքի, քաղպարապմունքի, քայլելու և ֆիզիկական աշխատանքի, ինչքան ասեն, աշխատում ենք, իսկ կերակրելու տեսակետից չգիտեմ՝ ասեն լա՞վ է, թե՝ վատ: Մենք գտնվում ենք մի այնպիսի ննջարանում, որտեղ ապրում են 500-ից ավելի բանակայիններ:

Սրանով բավականանք: Բարևներ թևոս դայուն, աքրուն և բոլոր մեր բարին ցանկացողներին:

Մասմ ձեր՝ Սուրեն Խանյան:

29.04.1941թ.

ԲՍՍԴ, Բրեստի մարզ, ք. Պրուժան
Շ/ 1Կոշարկա, Շ/յ1/16

1. Կոլյա- մեր հորաքրոջ որդին՝ հայտնի հրավարան Նիկոլայ Շովենիանը:

10. Թանկագին ծնողներ...



Ընդունեցեք որդիական կարոտալի, քաղցր, հեռավոր բարևներս:

Սիրելի ծնողներ, ձեզանից միայն մի նամակ եմ ստացել՝ մայիսի 23-ին, որը շատ համառոտ էր: Ինչո՞ւ ուշ-ուշ եք նամակ գրում: Օլինկից¹ ստացա մի նամակ, մի նամակ էլ՝ Մանյահից², իսկ Քույրիկից³ դեռ չեմ ստացել, բայց 3-4 նամակ եմ գրել: Մենք այստեղ նամակով ենք ապրում, աչքներս փոստի ճանապարհին է միշտ: Մինչև հիմա շատ ցուրտ է եղել, բայց այժմ անչափ տաք է, նոր է մանուշակը բացվում, ծառերը նոր են կանաչում, ոչ մի պտուղ չկա: Ազատ ժամանակ չունեմ, որ շուտ-շուտ նամակ գրեմ:

Միջազգային դրությունը շատ վատ է: Կամ այսօր կռիվ սկսվի, կամ՝ վաղը, բայց ընդհանրապես, լավ ենք: Գրեցեք Մանյահի հասցեն, որովհետև կորցրել են: Էլ ինչ գրեմ, բարևներս բոլորին:

Որ նամակ եք գրում, մի մաքուր բուլք դրեք հետո, բուլք չունեմ, ճամպրուկները հավաքել են, ամեն ինչ մեջը:

Մոռացա ասել, որ մոժակ շատ կա, դժվարում են: Կծելիս մարդու դադերը բարձրանում են:

Այսուհետ նամակ կգրեք հետևյալ հասցեով.
ԲՍՍՌ, Բրեստի մարզ, Պրուժանի շրջան,
ի/՝ Կոչարկա, ի/ց 16, գ- 1:
26.05.1941թ.

- 1.Օլինկա- մեր բարեկամի դուստրը
- 2.Մանյա- մեր կրտսեր մորաքույրը
- 3.Քույրիկ-մեր ավագ մորաքույրը՝ Արուսյակը

11. Սիրելի ծնողներ...

Ընդունեցեք հեռավոր որդիական բարևներս: Ինչո՞ւ նամակ չեք գրում: Գրեցեք տեսնեմ բերքն ինչ վիճակում է: Այստեղ նորություն չկա, միայն պատահմամբ պահակը փոխելիս մի բանակային սպանվեց, սպանողը բանտարկված է, ուրիշ ոչինչ:

Հավանական է՝ շուտով Գերմանիայում կլինենք, որովհետև շատե-

րին տվին այն ամենը, ինչ կրվի ժամանակ է հարկավոր: Տվին նաև այն փոքրիկ պարկուճք, որտեղ գրված է ընտանիքի հասցեն:


Մի անհանգիստացեք ինձ համար:

Մենք առանձին ենք՝ բոլոր 10-րդն ավարտածները: Մեզ առանձնացրին և կազմեցին առանձին վաշտ: Մեկ կամ երկու տարի հետո գալու ենք տուն: Քննություն պիտի տանք և լեյտենանտի կոչում ստանանք:



Զեր՝ Սուլրեն, 2.06.1941թ.

12. Թանկագին քույր Օլյա...



Ընդունեցեք եղբայրական հեռավոր ծաղկաբույր ու հիասքանչ բարևներս: Ես լավ եմ, մի անհանգստացեք: Օլյա, քո վերջին նամակն ստացա հունիսի 7-ին, որն առանց ամսաթվի երև և համարուտ: Բայց ոչինչ, այդ ևս բավական է: Քույրիկս, ձգտիր քննություններդ հաջող հանձնել, բոլոր դասերդ լավ ստվորիր: Մենք ամսուս 6-ին գիշերը տագնապի դուրս եկանք և 60 կմ քայլեցինք:

Դիմա էլ պատրաստվում ենք ամսի 10-ին քայլելու: Բայց դրա պատճառներն ու նպատակը մեզ հայտնի չեն: Այստեղ առանձին նորություն չկա, միայն մի գինվոր 45 ռուբլի գողանալու համար 6 ամսի նստեցրին: Այժմ նա բանտում է:

...Օլյա, առայժմ բոլորս միասին ենք: Մեր վաշտում բոլորը 10-ն ավարտածներն են: Պիտի դառնանք պահեստի լեյտենանտ, վերադառնանք տուն 1 կամ 2 տարրուց հետո: Այժմ մեզանից չեն հարցնում՝ ուզում ես կամ չես ուզում, անունդ կարդում են, վերցրու շորեր դ. չգիտես ուր են տանում: Երբ տեղ ես հասնում, այդ ժամանակ ես իմանում: Էլ ինչ գրեմ: Բարևներ հաղորդիր քո բարին ցանկացողներին:

Օլյա ջան, այլևս նամակիդ մեջ փող չդնես:
Քո եղբայր՝ Սուլրեն:
8.06.1941թ.

Բանաստեղծություններ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

ՀԱՅՐԵՆԻՔ

Դու ծնվեցիր, հայրենիք, մրրկաշունչ պայքարից,
Ընդվզումի, բախումի քանի՛ ճամփա դու անցար,
Եվ քո հետու թողնելով անդունդները վիթխարի,
Դեպի անմար արևը, դեպի գալիք սլացար:

Հազարայցա լույսերը շողշողացին քո ճամփին,
Որոտացին ամենուր թմբուկները հաղթական,
Երջանկության արևը ժպտաց շքեղ քո դեմքին,
Եվ դու դարձար, հայրենիք, բախտավոր ու անսասան:

Քո լույս գրկում ծնվեցին քանի՛-քանի սերունդներ,
Ու սնվեցին նայրական ու թովչական քո կաթով,
Սիրեցին քեզ որպես մայր, որպես արփի լուսաբեր,
Որպես կյանքի աղբյուրը՝ հոգեպարար, կենսաթով:

Ու թե մի օր, հայրենիք, քեզ մոտենա թշնամին,
Այն ժամանակ Դավթի պես ես Զալալին իմ հեծած,
Կմարտնչեն քաջաբար հանուն քո վառ գալիքի,
Կսլանան միշտ առաջ, կսլանամ միշտ առաջ:

1940թ.

ՔԵԶ ԵՄ ՊԱՐՏԱԿԱՆ

Սնվել եմ քո քաղցր կաթով՝
Մորս կաթին հավասար,
Եղբայրներ են իմ թիկունքին
Դաշտ ու արոտ, լեռ ու սար:

Խմել եմ քո ջրերը սառ,
Դարձել անպարտ դյուցազում,
Քո սիրով եմ ես խանդավառ,
Քեզնով՝ հզոր ու հասուն:

Իմ մոր մայրն ես ոու սիրատուն,
Իմ պատիվն ես, իմ ոգին,
Ե՛վ երգիս մեջ, և իմ կյանքուն
Քո զինվորն եմ, քո որդին:

1940թ.

ԵՐԿՐԻՍ ՀԱՍԱՐ

Իմ երգերը հայրենական
Երկրիս սրտից են բխուն,
Երկրիս սիրտն է երգերիս մեջ,
Այն իմ սիրտն է բարախուն:

Երգս՝ խնդուն, երգս՝ ծփուն,
Միշտ թևուն է դեպի քեզ,
Իմ երգերը թևածուն են
Քո ինաստուն խոսքի պես:

Քո որդին եմ, քո աջ ձեռքը,
Քեզնից հեռու չեմ գնա,
Ե՛վ իմ սիրտը, և իմ երգը
Զենք-զրահ են քեզ համար:

1937թ.

ՐԱՅՐԵՆԻՔԻՍ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

Ով դուք նենգամիտ չարագործ շներ,
Դուք անգութ, անսիրտ, գերեզման փորող,
Որքան էլ ուզեք մեր հողը մտնել,
Մեր կյանքը վկա, երբեք չեք կարող:

Ինչքան էլ ձգտեք՝ խլուրդի ննան
Մեր հողը փորել դուք գաղտագողի,
Դարձյալ չեք կարող, չեք կարող երբեք
Տիրանալ ներ սուրբ հայրենի հողին:

Ծնել է ահա հայրենիքս վառ
Պողպատ կամքերով արծիվներ բազում,
Զահակիրներ են խիզախ, լուսարար,
Որ ոսխների մահն են երազում:

Մեր բազեները թռչում են այնտեղ,
Ուր թևածում են արծիվները հաղթ,
Մեր դրոշները ծփում են շքեղ՝
Հաստատելով մեր շքերթը անպարտ:

Դուք լավ ինացեք, ոսխներ անգութ,
Որ միլիոն ենք մենք՝ անպարտ ու հզոր,
Մենք արծիվներ ենք՝ հայրենի երկնում,
Թշնամու դիմաց միշտ ամենազոր:

Մեր ժողովուրդն է մեզ ուժ պարզել,
Կոփել մեր կամքը պայքարների մեջ,
Դայրենիքն է մեզ ընծայել թևեր,
Ընծայել ազատ ապրելու վառ տենչ:

Դուք բորենիներ, դևեր գարշելի,
Ժողովուրդների դաժան թշնամի,
Ինչքան էլ ձգտեք մեր հողը մտնել,
Երբեք չեք կարող և ոչ մի ժամի:

Մոսկվայի լույսով օծված մեր երգը,
Մեր դրոշն է հաղթ, որ պարզել ենք մենք,
Կծակի հավերժ մեր լույսի երթը,
Մեր հաղթանակի օրհներգը կերգենք:
1940թ.

ԱՍԱ ՏԵՍՆԵՄ

Ասա տեսնեմ՝ ո՞վ պարզեց
Մեզ այդքան ջերմ խնդություն,
Քո հոգու մեջ ո՞վ է դրել
Սիրո հրճվանք, քաղցրություն:

Գեղատեսիլ գարո՞ւնն է քեզ
Բերել սիրո ծով բերկրանք,
Թե՞ դայլայլող բլրուլն է քեզ
Ընծայել սեր ու հմայք:

Արկի՞ց ես վերցրել, արդյոք,
Յրավառված դեմքը քո,
Գուցե լուսնի՞ց գեղահրաշ
Կամ աստղերի՞ց՝ հոգեթով:

Չէ, ոչ մեկին չեմ հավատում,
Ոչ Արևին, ոչ Լուսնին,
Ոչ գարնանը՝ ծաղկունք հագած,
Ոչ դայլայլող սոխակին:

Չունի ոչ ոք այդքան կորով,
Որ նվիրեր հորդ մի սեր,
Բացի մեր սուրբ հայրենիքից,
Որ տալիս է մեզ թևեր:

Նա է, նա է քեզ ընծայել
Այդքան հմայք ու քնքշանք,
Իսկ, իմացիր, քո հմայքն է:
Ինձ նվիրում սեր, բերկրանք:

1940թ.

ՄԵՐ ՀԻՆ ԳՅՈՒՂԸ

Խավարի մեջ էր, մութ էր մեր գյուղը,
Խարխուլ էր, բռիկ, աղքատ, հողաշեն,
Բոլոր թաղերում հյուղեր ծեփազուրկ,
Նայելուց մարդու սիրտը կմաշեր:

Կարկատած բլուզ, կիսաքաղց օրեր,
Աճնինջ տարիներ՝ Աստծո հույսով,
Միայն տոներին՝ մաքրված շորեր,
Ուրախությունն էլ՝ ճրագի լույսով:

Չար ու մութ բախտից դառնացած սրտեր,
Անեծք անտեղի, հարսերի կոհիվ,
Անգիտությունը ծփում էր ոնց տեր,
Ապրուստը պակաս, մտքերը խոհիվ:

Լոկ քահանան էր տառկապով կարդում,
Ոչ ընթերցող կար, ոչ նամակագիր,
Լավ է հեքիաթ կար, երազ կար լուսե,
Յեքիաթասաց կար՝ երազին հարիր:

Օրենքը բիրտ էր, իսկ մարդիկ հլու,
Ապրում էին հաշտ՝ հին կյանքին գերի,
Գյուղացին տիրոջ հողն էր մշակում,
Իրենը չէին հողերը բերրի:

Ու եկավ պահը, սարերում մեր սեզ,
Մեծ Յոկտեմբերի արևը ժպտաց,
Նոր ուղի մտավ և գյուղը մեր հին՝
Ուրախությունից թուխ աչքերը թաց:

1936թ.

ՄԵՐ ՆՈՐ ԳՅՈՒՂԵ

Նոր առավոտ է բացվել մեր գյուղում,
Հաշնում են մեկ-մեկ տներ քարաշեն,
Ազատ կյանքի նոր արևն է շողում,
Գյուղը դառնում է բուրող ծաղկաշեն:

Յոգսերի բեռը թերև է դառնում,
Չքվել է սովը, մութը՝ առհավետ,
Գյուղի կենտրոնում դպրոցն է հառնում,
Մաշտոցն է խոսում մանուկների հետ:

Ակումբը երգի օջախ է դարձել,
Դռներն է բացել խանութը մեր նոր,
Ճինը պատմության խոր գիրկն է անցել,
Նորի օրիներգն է հնչում մեղմօրոր:

Տղա և աղջիկ գրքերն են բացել
Եվ դասն են սերտում մեր նոր օրերի,
Ես՝ ուսուցիչս, հապրությամբ խոր,
Գալիքն եմ տեսնում նրանց թևերին:

Սակայն մի խորհուրդ սիրտս է հուզում,
Եվ մտորում եմ ես գիշեր ու տիվ.
«Գյուղ ունենալը պատիվ է, իրոք,
Գյուղը պահելն է կրկնակի պատիվ»:

1936թ.

ԱՐՏԵՐ

Իմ հայրենի կանաչ արտեր,
Մեր տենչերի պես կանաչ,
Բուրում եք ոնց գարնան վարդեր,
Ծփում ուրախ, անհառաչ:

Չեզ նայելուց ցնջում եմ ես,
Սիրտս եք շոյում մորս պես,
Չեր մեջ հորս քրտինքը կա,
Մորս շոյանքն արևկա:

Դուք մեր դարի հացաբույր երգ,
Ես ձեր երգի խմկարկու,
Յավերժական մեր կյանքի երթ,
Ասեք, ո՞վ չի ձեզ երգում:

Յասունացեք ոսկեհատիկ,
Մեր հույսերի պես շողոտ,
Չեր կենարար ուժն եմ տեսնում
Յորս ափի մեջ հողոտ:

Երկիրն առանց ձեզ անուժ է,
Դուք մեր ուժն եք, կամքը մեր,
Մեր հայրենի կանաչ արտեր,
Դուք կենսատու փառքն եք մեր:

Դուք ոչ միայն բերքն եք մեր,
Դուք անառիկ բերդն եք մեր:

1937թ.

ՍԻՐՈ ԹԵՎԵՐԸ

ՍԵՐԸ ԹԵՎԵՐՆ Է ՄԱՐԴՈՒ

Սարի գլխին մի աշուղ,
Զեռքին սազը հոգեթով,
Յետն էլ պարզած վարդի փունջ,
Ինձ կանչում է նա իր մոտ.

«Արի, պոետ դու ջահել,
Արի հյուսիր երգը քո,
Ես ուզում եմ միշտ լսել
Քո երգերը սիրաթով:

Տեսնում ես դու իիմա լուռ
Այս գարունքին սիրատես,
Թեկուզ ինքս մի աշուղ,
Ես ուզում եմ լսել քեզ:

Սիրտս լի է երգերով,
Երազներով հրավառ,
Դարձել եմ ես հեքիաթի
Կախարդական սիրահար:

Թեև սերս է աստղաշող,
Բայց տկար է իմ լեզուն,
Սիրտս բացել չեմ կարող,
Այն խարույկ է հրկիզուն:

Պատմիր սիրո ուժը մեծ,
Սիրո ուժը մշտավառ,
Սերս սազը իմ մերժեց
Եվ ինձ դարձրեց խելագար:

Ասա՝ նրա սազը նուրբ,
Որ ինչում էր սիրավոր,
Այս սիրաբույր վարդի պես
Դարձրել է ինձ գլխիկոր:

Պատմիր հեքիաքն իմ սիրո,
Որ արև է հրակեզ...
Դե, մոտ արի հենց հիմա,
Ես հանձնում եմ սազս քեզ:

Թող սրանից հետո նա
Ուրախ հնչի քո ձեռքին,
Թող ինձ հավետ մոռանա,
Սակայն սերը միշտ երգի:

Իսկ դու երգեր իյուսելիս
Չմոռանաս ոչ մի օր,
Չմոռանաս, որ սերն է
Ինձ դարձրել ալևոր»:

Ու սազն առավ ջահելը,
Երգեց խոսքն իր իմաստուն.
«Լավ իմացիր, ով աշուդ,
Սերը մեղը է... սերը՝ թույն:

Սերը կյանք է, սերը՝ երգ,
Որ կհնչի ինչպես Ասք,
Սերն օրինանք է, սերն անեծք,
Դու այդ պետք է իմանաս:

Ոմանց իամար սերը թույն է,
Ոմանց իամար՝ անգութ մահ,
Ոմանց իամար ջերմ համբույր է,
Ոմանց՝ անդունդ, ոմանց՝ զահ:

Իմացիր օրենքը այս իին,
Սերը Աստծու նվերն է,
Եվ իմչքան էլ դառը լիմի,
Սերը մարդու թևերն է...»:

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵ

Այսօր մտա մեր այգին,
Աչքս դիպավ մի վարդի,
Ասես մեր սեգ Քիրսա սարից
Ինձ էր ժպտում վառ արփին:

Մեր այգու մեջ բուրող վարդն այդ,
Երգի փոխված ինձ տարավ,
Տարավ ինձ այն աղջկա մոտ,
Որին սիրել եմ ծարավ:

Այն օրվանից վարդը սեր է,
Մերը վարդ է ինձ համար,
Վարդի-սիրո վառ շողերն են
Կապել հոգուս մեջ կամար:

1937թ.

ԱՐԻ, ՍԻՐՈՒՅՆԻՍ

Դարձյալ ու դարձյալ իմ ցուրտ սենյակում
Տիկին տիսրության դեմ-դիմաց նստած,
Խոհերով առատ, միտք էի անուն,
Միտք էի անուն՝ երգերով տարված:

Դուրսը խավար էր, մթին երեկո,
Ու լսուն էի ծայնը տիսրության,
Այդ տիսրությունը կարոտ էր դառնուն,
Իսկ խոր կարոտը փոխվում տրտմության:

Խավարը ցրեց լուսինը վերից,
Ու հովը փչեց լեռներից կանաչ,
Երգում էի ես գալիքը լուսե,
Որ սերունդներին վաղուց է ճանաչ:

Եվ հանկարծ դրսից լսեցի մի ձայն,
Քնքույշ էր ձայնն այդ սրտերը գերող,
Վախվորած ելա ես արծվի նման,
Որպես մի գնդակ չարին չներող:

Տեսա ես նրամ՝ սիրուն եղճիկիս,
Ալ վարդի նման դեմքս կարմրեց,
Դամբուրեցի ես նրա նուրբ փեշից,
Ու ջահել սիրտս նորից խաղաղվեց:

Արի, սիրուիխս՝ վարդս նոր բացված,
Արի ու նստիր միայն իմ կողքին,
Դու իմ ճամփեքին բուրող ծաղիկ ես,
Քեզնով է հիմա ջերմանում հոգիս:

Թող մեր ջերմ սիրուց նոր երգեր ծնվեն,
Նոր երգերի մեջ շողա ապագան,
Արի, սիրուիխս, մեր անքիծ սիրով
Կյանքի դրոշը պարզենք հաղթական:

1939թ.

Ի Ն Չ Պ Ե Ս Ս Ո Ռ Ա Ն Ա Մ

Այգուց եկա, մտա տուն,
Արտասուրը աչքերիս,
Ստիկ տվի հայելուն,
Սիտս ընկավ նազելիս:

Այտերիս ու ճակատիս
Տեսա այրող կնճիռներ,
Դրանք մեր սեզ սարերում
Իմ եղնիկն էր նվիրել:

Ամեն անգամ այգու մեջ,
Երբ խոհերս են արթնանում,
Կրկնում եմ ինքս ինձ.
Սեր իմ, քեզ չեմ մոռանում:
1940թ.

* * *

Օրեր Եկան վառ գարնան,
Մի վարդ բուսավ մեր այգում,
Աղպես բուրող մի ծաղիկ
Ես չեմ տեսել իմ կյանքում:

Բայց միտք արի ու տեսա,
Թեկուզ այսքան գեղանի,
Որ ծնվել է, մեկ է, սա,
Անշուշտ, պիտի թառամի:

1941թ.

* * *

Ինչպես ուռին առվի ափին
Տիրությամբ է աչք բացում,
Բլբուլն ինչպես թիերից
Վարդի համար է լացում,
Ինչպես նրա սիրո երգն է
Սիրողներին թև տալիս,
Այդպես էլ իմ սիրտն է տխուր,
Քո ճանփերին միշտ լալիս:
Մի հեռանա դու ինձանից,
Մնա մոտս, թանկագին,
Թող քո խոսքով զարկի սիրտս,
Ծնվի սիրո երգն անգին:

1941թ.

ՄԻՐՈ ՏՈՂԵՐ

Գանձ, հարստություն ես չեմ երազում,
Ես չեմ երազում ոսկի ու արծաթ,
Ինձ միայն քո թուխ աչքերն են հուզում,
Ինձ գրավում են քո ծամերը սաթ:

Դու իմ կակաչն ես, դու իմ գարունը,
Հարստությունս լոկ դու ես, որ կաս,
Քո մեջ եմ տեսնում երջանկությունս,
Դու իմ երազն ես, արփին ոսկեվարս:

* * *

Երբ որ բացվում են քո շրթունքները,
Թվում է՝ վարդի թերթեր են նրանք,
Երբ մեկնում ես ինձ դու քո ձեռքերը,
Ես ինձ զգում եմ աստղերի վրա:

Առվի կարկաչում, աղբյուրի երգում
Ես քո ծիծաղն եմ լսում հոգեթով,
Դու տեղ ես գտել իմ ջահել սրտում,
Սերս քեզ նվեր՝ իմ այս ջերմ երգով:

* * *

Մի հովիտ լիներ կանաչ ու ազատ,
Սանուշակները բուրեին անվերջ,
Մեր աղջիկները շրջեին այնտեղ,
Սրտերում վառած երազանք ու տենչ:

Ես այդ հովտի մեջ աղբյուր լինեի,
Կյանք արարեի միշտ այդ վայրերում,
Իմ սիրածը գար, լվացվեր ուրախ,
Պատկերը տեսներ սրտիս հայելում:

1938թ.

ԽՈՅԵՐԻ ԱԾԽԱՐՁՈՒՄ

ՃԵՐԹԸ ՄԵՐՆ Է

Մարդիկ եկան և անց կացան
Յազար ու մի վերքերով,
Գարուններին ճամփա տվին՝
Յույսեր վառող երգերով:

Յիմա հերթը դանդաղ եկել
Ու հասել է արդեն մեզ,
Պիտի երգենք, պիտի սիրենք
Այս աշխարհը ուկետես:

Պիտի ջահեր վառենք սիրով,
Շողեր ցանենք մեր ճամփին,
Որ նորերը գան ու ասեն՝
Նրանք վառեցին այս արփին:

Պիտի մեր քաջ պապերի պես
Ասենք՝ հերթը մերն է արդ,
Եվ ինչքան էլ ճամփան քարոտ,
Ապրենք մաքուր ու հպարտ:
1940թ.

ՃՐԱԳԻՍ ՃԵՏ

Ամեն անգամ երբ նայում եմ
Լուսապայծառ ճրագիս,
Կարոտներով ես հիշում եմ
Արևատես սիրածիս:

Որ ամեն օր հույս է տալիս
Սիրատոչոր իմ հոգուն,
Շողեր ցանում երազներիս
Արևի պես բորբոքուն:
1940թ.

ՅՈՐՍ ԿՏԱԿԸ

Երբ իմ ճամփին միտք ծագեց՝
Սիրել կյանքը բովանդակ,
Դայրս ճակատս համբուրեց
Եվ ինձ թողեց մի կտակ:

Ասաց՝ սիրիր ընկերոջդ,
Սիրիր ազնիվ եղբոր պես,
Ընկերամեջ կոպեկդ
Դու ճիշտ կանես երկու կես:
1941թ.

ՄՈՐՍ ԿՏԱԿԸ

Երբ սլանալ ցանկացա
Անձայրածիր կյանքի մեջ,
Ես իմ մորից ստացա
Այս նվերը լուսառէջ.

- Լսիր,- ասաց,- իմ բալա,
Տես, չլինես անլեզու,
Իսկ դրա հետ չդառնաս
Անձանոթին դու լեզու:
1941թ.

* * *

Արծվին ահեղ, սլացող,
Ծտի թևերն ի՞նչ անեն,
Սարերն ի վեր սողացող
Թուխս ամպերը ի՞նչ անեն:

Առյուծն ահա թագավոր,
Տես, իշխում է կառավոր,
Ծեծ է բաշխում ամեն օր,
Սովածներն ի՞նչ անեն:
1941թ.

* * *

Մեր գյուղի մոտ մի առու
Քչքում էր, խոխոջում,
Նորահարսի նման խոհուն
Մտորում էր, անրջում:

Տարիներ անց խոր կարոտով
Այցելել եմ ես նրան,
Առուն մի խոր ձոր է դարձել,
Կյանքի հետքը իր վրա:
1941թ.

ԿԵՑՑԵՍ, ԱՆՄԱՅ ՖԻՐԴՈՒՍԻ

Դու իրեղեն ձիուն նստած, ինչպես երգի Ռուստամ Զալ,
Անմահական քո քնարով թևածեցիր դեպի մեզ,
Քո տողերով մարգարտաշար, երգերիդ հետ իրավառ,
Արծվի թևով թռար, հասար դու մեր դարին լուսատես:

Երգերիդ հետ լուսաշաղախս, հույզերիդ հետ իրաշեկ,
Սլանում ես դեպի առաջ, դեպի աստղոտ ապագան,
Շոյում ես դու, մեծ Ֆիրդուսի, ամեն հոգի, ամեն սիրտ,
Ու Շահնամե քո էպոսով անցնում ուղիդ հաղթական:

Յավերժախսոս քո երգերով լույս ես ցանում ամենուր,
Դալարում ես դարերի հետ, սրտերի հետ իրավառ,
Դալարում ես, մեծ Ֆիրդուսի, նաև իմ սուրբ երկրի մեջ,
Ապրում ես դու ու միշտ կապրես քո երգերով լուսարար:

Յայոց հողից ավիշն առած, հոգու լույսը ծալքերում,
Նոր պոետն է հպարտ քայլում երգիչների շարքերում,
Յայոց քնքուշ քնարն առած, ասում է և միշտ կասի՝
Աշխարհը միշտ քեզ կպաշտի, անմահ երգիչ Ֆիրդուսի:

1939թ.

ՄԱԶՍԻՄ ԳՈՐԿԻ

Կյանքի խոր հատակից
Դու ելար մեծ աշխարհ,
Ու երգերով քո նոր
Մեծն երգիչ դառար:

Չհաշտվեցիր երբեք
Անզութ տեղերի հետ,
Հանուն ժողովողի
Խոսքդ դարձրիր սուր զենք:

Դու պայքարի ելար
Գրի զենքով հատու,
Երազեցիր անվերջ
Սզատ կյանքը մարդու:

Ներկայից դեպ գալիք
Խոսքդ ծիածանվեց,
Մրրկահավի երգդ
Պայքարի հուր ցանեց:

Դու տեղ գտար նաև
Ժողովրդիս սրտում,
Նրան տվիր թևեր
Ու սեր մի անհատնում:

Դարեր կգան, կերթան,
Բայց դու կապրես հավետ,
Ու կմնաս ջահել
Գալիք օրերի հետ:

Ինքդ բանվոր էիր,
Երգդ՝ բանվորի տենչ,
Քո մարտնչող խոսքը
Վառվող ջահ է անշեց:

Դու մարտիկ ես տոկուն,
Զահակիր ես երգի,
Քո երգերն էլ հզոր
Ելել են գոռ երթի:

Ու քանի կա կյանքը,
Եվ պայքարը արդար,
Դու հասարակ մարդուն
Սիշտ կլինես սատար:

Դու հանճարեղ գրող,
Սերմնացան նոր երգի,
Սերունդների համար
Խոսքի դրոշ, Գորկի:

1936թ.

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

ԾԻՏԸ ՈՒ ՏՂԱՆ

Մի թխաչյա, ժիր մանուկ
Ծառի ճյուղից բարալիկ,
Կատվի նման լուռ-թաքուն,
Բռնեց փոքրիկ մի ծիտիկ:

Ու ծիտիկը աղաչեց.
Բաց թող, գման, ին բարի,
Երեք զաղտնիք կասեմ քեզ,
Նաև վերջը աշխարհի:

Մանուկն զգաց ծիտիկի
Բարի սիրտը թրթռուն,
Ասաց՝ ծիտիկ, լսում եմ,
Թոիր գնա դու հեռու:

Ծիտիկն ասաց.- Ով տղա,
Չմոռանաս դու երբեք,
Ամենկին չափսոսաս,
Ինչ արել ես դու երեկ:

Չընկնես փողի հետևից,
Փողը չի տա հանգիստ քուն,
Դու բարություն միշտ արա,
Լավը դա է այս կյանքուն:

Իսկ աշխարհի վերջը, տես,
Դու իմ փոքրիկ սիրավառ,
Եթե դու ինձ սպանես,
Վերջ է աշխարհն ինձ համար:

Շատ ափսոսաց թխաչյան,
Որ բաց թողեց ծիտիկին,
Ծիտը խելոք, դարձել եր
Իր ընկերը թանկագին:

Ու ցանկացավ նա նորից
Բռնել ծտին՝ փետրախաս,
Ծիտը թռավ՝ դիմելով.
«Բա չասացի՝ չափսոսաս»:
1940թ.

ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԳԱՐՈՒՆԸ

Զյունը բակից հեռացավ,
Մեր դաշտերից վերացավ,
Արև օրեր բացվեցին,
Մանուկները խաղացին:
Գետնի տակից դուրս եկան
Ծաղիկները նոր գարնան՝
Նարգիզ, վարդեր անուշակ,
Զնծաղիկ ու մանուշակ:
Այդպես ուրախ ու սիրուն
Եկավ նորից ժիր գարուն,
Բերեց իր հետ պար ու խաղ,
Սրտեր գերող երգ ու տաղ:
Ու երջանիկ երգելով,
Երգերի հետ պարելով,
Մանուկները գնացին
Ու սրտաբաց ասացին.
- Գարուն, գարուն սիրատես,
Պատասխանիր հիմա մեզ,
Այս օրերին ծաղկավառ,
Ի՞նչ ես բերել մեզ համար:
Գարունը մոր պես ժպտաց,
Սրտի խոսքը իր ասաց.
- Իմ երջանիկ մանուկներ,
Ես բերել եմ նոր երգեր,
Ոսկեթիկ թիթեռներ,
Որ դուք խաղաք երջանիկ:
Դիմա մեր ծով դաշտերուն
Թոշումներն են թևածուն,
Երգում են ժիր, սիրավառ,
Դայրենիքի, ձեզ համար:
Ամեն սարի, ժայռի տակ

Կա մի աղբյուր ու գետակ,
Երգում են ու կարկաչում,
Իրենց գիրկն են ձեզ կանչում:
Դեհ, գմացեք երգով նոր,
Վարդեր քաղեք նորանոր,
Բուրող փնջեր կազմեցեք,
Տրակտորիստին նվիրեք:
Թող նա նորից ուժ առնի,
Մեր դաշտերը լավ վարի,
Դե, ձեզ մատաղ, մանուկներ,
Ես բերել եմ նվերներ:
Եկեք, մեկտեղ խաղացեք,
Ուրախացեք, մեծացեք,
Առեք արօվի հաղթ թևեր,
Դարձեք երկրի պաշտպաններ:

1939թ.

Ե Ծ Ն ՈՒ ԳԱՅԼԸ

(Առակ)

Մի զորբա էշ մի լայն դաշտում
խոտ էր ուտում, զվարճանում,
Մեկ դես ցատկում, մեկ դեն ցատկում
Եվ իշային ձայնով երգում.
«Խոտ ու ծաղիկ կերա ես,
Հանգիստ, մենակ, սրատես,
Համտես արի նորաքաց
Ծաղիկները՝ ցողաթաց:
Այստեղ կգամ ամեն օր,
Կուտեմ խոտեր նորանոր,
Վաղվա օրը իմ սրտում,
Թռչկոտելով կերթամ տուն:
Բայց թե լիներ մի ընկեր,
Կասեինք ժիր նոր երգեր,
Այս ծաղկազարդ մայիսին
Քեֆ կանեինք միասին:
Իմն է արդեն այս դաշտը,
Քեփս լավ է, ու կուշտ եմ,
Ինչի ձգտեմ՝ կհասնեմ,
Ով ուժ փորձի, կապանեմ...» -
Մոռանալով հաստ լեշը,
Այսպես խորհում էր էշը:
Դենց այդ պահին դիմացից
Պոչը գորշուկ, քիթը ցից,
Մոտենում է գորշ գայլը,
Մեղմացնելով իր քայլը,
Ասում. «Եղբայր իմ անգին,
Քեզ բարևս սրտագին,
Երեք ամիս ման եկա,

Վերջը այստեղ քեզ գտա:
Յիմա պատմիր, հերամեռ,
Որտե՞ղ էիր տարիներ,
Տեսնում եմ, որ ուրախ ես,
Կուշտ փորով ես, ջրված ես»:
Գայլը սակայն զայրացավ,
Եշի վրա բարկացավ.
«Պատասխանիր, կյանքս վկա,
Սպասելու էլ ժամ չկա:
Այստեղ մենակ քեֆ ես անում,
Եղբորդ հոգսը չես տանում,
Չես էլ ասում, թե որտեղ է,
Մեղավո՞ր է, թե անմեղ է,
Դե լավ, ոչինչ, ես կներեմ,
Մեծավարի կիամբերեմ,
Այժմ պատմիր, բարի ընկեր,
Ինչպե՞ս գտար դու այսքան կեր»:
Զորբան նայեց գայլի դեմքին,
Ոտք մեկնեց, խփեց թարին.
«Բարով եկար, հազար բարով, -
Փնչաց զորբան խաղաղ սիրով,-
Էստեղ էի, եղբայր ջան,
Քեֆ էի անում ժրաջան,
Պարում էի ծախս ու աջ,
Մինչև գալո, քիչ առաջ:
Այս աղբյուրից մինչև սար
Իմն են արդեն դարեդար:
Մեջը ծաղկունք ու վարդեր,
Սառն ու զուլալ աղբյուրներ:
Արի, եղբայր այս մասին
Երգենք, պարենք միասին»:
Եվ չափազանց գայլն ուրախ
Եվ էշ-զորբան միշտ ախմախ,
Երգ երգեցին գարնանատենչ,
Ծաղիկների, խոտերի մեջ:

Աղբյուրի մոտ զորբան կանգնեց,
Գայլը գլխով ուժգին ցատկեց,
Ապա գայլը անշարժ դառավ,
Զորբան գայլի գլխով թռավ...
Գայլը վճռեց էշին խժոել,
Միսը ոսկորից մաքրազարդել:
«Նորից արի,- կանչեց գայլը,-
Պիտի հարցնեմ ես քո հալը:
Գիտե՞ս, եղբայր, լավ չես ցատկել,
Շատ մոտիկից ես եկել»:
Զորբան տիխուր հեռու գնաց,
Ինքն իրեն քիչ փնթինթաց
Ու որոշեց արագ վազել,
Գայլի գլխով բարձր ցատկել:
Ու շատ հեռվից վրագ-վրագ,
Գայլին հասավ նա վազեվազ,
Ամբողջ ուժը կրկնապատկեց,
Գայլի գլխով բարձր ցատկեց:
Բայց զորբայի հաստ ոտները
Դեռ խիստ ցցված օդի մեջ,
Գայլը սուր-սուր ժանիքները
Էշի կողի մեջ խրեց:
Զորբան ճշաց մեծ ուժով.
- Վայ, ցավում է, ի՞նչ ես անում:
Գայլը ուրախ պատասխանեց.
- Ոչինչ, ոչինչ, քեֆ եմ անում:

1939թ.

ՔԱՂՅԱԿԱՆԵՐ

* * *

Դայրենիքս անմար է,
Բախսի լուսե կամար է,
Մեր օջախը հրավառ
Նրա ճամփի համար է:

* * *

Թող հար հնչի մեր երգը,
Առատ լինի մեր բերքը,
Ժողովրդի կուռ կանքով
Անպարտ լինի մեր երթը:

* * *

Աղբյուրները թող կարկաչեն,
Մեր զենքերը թող շառաչեն,
Ոստիմները մեր դարավոր
Սարսափի մեջ մեր դեմ հաշեն:

* * *

Մեր տենչերը կանաչում են,
Յարը յարին միշտ կանչում է,
Խանդի ծեռից կրակն ընկած,
Սիրած յարս ինձ տանջում է:

* * *

Կյանքի գետը վարարուն,
Պարզեւում է մեզ գարուն,
Այնպես ապրենք, որ խանդից
Զցամաքի սիրո առուն:

* * *

Տունը լուսնի շող է ընկել,
Ասես հոգուս ցող է ընկել,
Խռովել է յարս ինձնից,
Սիրտս վախից դող է ընկել:

* * *

Մեր տենչերը թող կանաչեն,
Աղբյուրները մեր կարկաչեն,
Հայրենիքը անյախս պահենք,
Որ ազգերը մեզ ճանաչեն:

* * *

Մեր ոսկեփայլ նոր երկրի մեջ
Թևեր առնենք երգերի մեջ,
Մանուկներին թև պարզենք,
Մեր քաղցրահամ բերքերի մեջ:

* * *

Թեկուզ ասեղ մի փոքրիկ,
Թեկուզ մի փունջ բուրող վարդ,
Երբ սրտանց ես նվիրում,
Զգում ես քեզ միշտ հպարտ:

* * *

Ընկերանեց միշտ երգեց,
Երգեց սրտանց ու ապրեց,
Երբ ցանկացավ բաժանվել,
Յոնգուր-հոնգուր արտասվեց:

* * *

Կյանքը առատ բերքի մեջ,
Ծաղիկների, երգի մեջ,
Իմ ժողովուրդ, իմ բախտը
Գտնում եմ քո երթի մեջ:

* * *

Ապրիր սիրով ու հարգանքով,
Մի կուրանա, բոլորին տես,
Երգդ հյուսիր երգով, հոգով,
Թե չէ՝ շատ շուտ կմռացվես:

* * *

Տես, երբ օր ու ցերեկով,
Դու գողացար ուրիշից,
Այն ժամանակ գիշերով
Կգողաճաս քեզանից:

* * *

Եկավ մի օր աշխարհը մեր.
Այն եղնիկը՝ աչքը թաց,
Սրտիս միջին բացեց վերքեր,
Թոռեց մենակ ու գնաց:

ՅԵՔԻ ԱԹՆԵՐ

ՔԱՌԱՍՈՒՆ ԶՈՐ ԵՄ ՏՎԵԼ, ՔԱՌԱՍՈՒՆԵԿՆ ԷԼ ԿՏԱՄ

Ավանդությունն ասում է, որ մի գյուղացի օրերից մի օր աշխատանքից վերադառնում էր տուն, երբ հանկարծ նկատեց մի զարմանալի երևոյթ: Խեղճ գյուղացին մնաց կանգնած, արյունը կանգ առավ երակներում, մազերը բիզ-բիզ կանգնեցին, ասես սիրտը դադարեց բարախելուց: Նա ցանկացավ չիավատալ իր աչքերին, բայց չէր կարող, որովհետև կատարվող երևոյթը գերող էր: Նա ինչ տեսավ. Աստված յուր կուրացած աչքերով չտեսներ. մի գանգ գլորվում էր անդադար և կրկնում՝ «Քառասուն զոհ եմ տվել, քառասունմեկն էլ կտամ»:

Գյուղացին անդադար մտածում էր՝ ինչ անի, վերցներ ջարդուփշուր աներ, որովհետև այդ չոր գանգը քառասուն և մեկ մարդկային զոհ պետք է խլեր, եթե յուր գյուղունը շարունակեր պահպանել: Այդ մտածմունքի հետ նաև խորհում էր՝ չլինի՞ թե այդ գանգը մահ պատճառի իրեն: Երկու հակադիր քևեռներ, երկու միտք՝ մոտենա՞լ, թե չմոտենալ: Վերջը խեղճ գյուղացին վճռեց մոտենալ՝ թեկուզ այդ զարհութելի գանգը յուր մահվան խթանը հանդիսանալ:

Գյուղացին մի կերպ բռնում է գանգը և բերում տուն: Փոշի է դարձնում, լցնում տոպրակը և պատից կախում, միևնույն ժամանակ հայտարարելով տանը, որ չմոտենանա տոպրակին, որովհետև նրա մեջ է գտնվում թույնի կատարյալ տեսակը:

* * *

Անցնում է որոշ ժամանակ, գյուղացու մինուճար աղջիկը ծանր հիվանդանում է: Ինչքան դիմում է բժշկության, Աստված է կանչում, բայց ոչինչ չի օգնում, աղջկա վիճակը օրեցօր ծանրանում է, տանջվում ու հյուծվում: Այդ րոպեներին մահն ավելի քաղցր էր նրա համար, քան թե:

ապրելը ու իիվանդության մեջ քաղցից տաճնզվելը: Աղջիկը մտածեց՝ խնել հոր բերած թույնից ու հրաժեշտ տալ լույս աշխարհին: Երբ հայրն ու մայրը դուրս եկան տնից, աղջիկը վեր կացավ, կամաց-կամաց, մի կերպ վերցրեց տոպրակն ու նրա միջից վերցրեց որոշ քանակությամբ փոշի՝ խնելու համար: Նա չէր ցանկանում առանց խոսք ասելու մեռնել, որովհետև նրա սրտում կար մի այնպիսի բեռ, որ չէր կարող տանել յուր զահել սրտում: Վերցրեց «թույնը» ու արտասվելով դիմեց աշխարհին.

Ի՞նչ եմ տեսել այս աշխարհում.
Սով ու տանջանք միմիայն,
Սիրոս դարձած մի մութ անկյուն,
Չորս պատի մեջ պարփակված:
Գիշեր-ցերեկ ցավը անհուն
Իմ սրտի մեջ կուտակված,
Ես ապրել եմ տասնութ գարուն,
Տասնութ ձմեռ ու ամառ,
Բայց ինձ համար կյանքը ցուրտ է,
Գարուն չկա ինձ համար:
Երնեկ նրան, ով իր կյանքում
Մի կուշտ փորով հաց կուտի,
Երնեկ նրան, ով իր օրում
Ցավ ու տանջանք չի տեսմի:

Իսկ քեզանից, հայր, շատ շնորհակալ եմ, որ դու նախատեսել էր վաղօրոք իմ մահվան համար այս թույնը...»:

Այդ ասելով, աղջիկը ուզածի չափ խմեց «թույնը», այն «թույնը», որ պետք է նրան ազատեր ցավ ու տանջանքից: Խմելուց հետո նորից պառկեց յուր անկողնում ու աչքերը փակեց հանգստանալու: Աղջիկը նախաձեռնում էր յուր մահը: Բայց սպասածի հակառակը կատարվեց: Այնպէս եղավ, որ աղջիկը սկսեց լավանալ՝ զարմացնելով բոլոր հարևաններին ու իրեն: Զարմացրեց ոչ թե լավանալու տեսակետից, այլ միանգամայն նոր երևույթով...

Աղջիկը հղիացավ և հորը պատմեց եղելությունը: Ժամանակը լրանալուց հետո աղջիկն ազատվեց՝ բերելով մի գեղեցիկ ու խելոք տղա: Ուրիշները, որ օրերով էին մեծանում, նորածինը ժամերով էր մեծանում, ուրիշները, որ

տարով էին մեծանում, նա օրով էր մեծանում: Երբ տղան դարձավ վեց տարեկան, չափազանց ճարտար լեզվի ու խելքի տեր էր, որը զնայլեցնում ու զարմացնում էր ամբողջ շրջապատին:

* * *

Մի անգամ թագավորի վեզիրները ձուկ էին բերում թագավորի համար: Երբ թագավորի աղջիկը նկատեց այդ, ձայն տվեց ու ասաց. «Եթե եգ ձկներ են, ներս բերեք, իսկ եթե արու են, տարեք ամեն կորցրեք»: Այդ լսելով, հանկարծ մի ձուկ, որը ջրի մեջ էր, կենդանի, ցատկում է ու աղջկա դեմքին ծիծաղում ու սատկում: Աղջիկն ու ծառաները մնում են զարմացած, մի քանիսն էլ դողալով վագում են թագավորի մոտ ու պատմում եղելությունը: Թագավորը նույնպես զարմանում է, թե ինչ հրաշք պետք է լինի այդ:

Երկար մտածելուց հետո թագավորը վճռեց խորհուրդ-ներ տեսնել երկրի իմաստուն մարդկանց հետ: Նա կան-չեց յուր տերության բոլոր իմաստուն մարդկանց ու նրանց պատմեց, թե ինչու անլեզու ձուկը պիտի ծիծաղի յուր շարմաղ աղջկա վրա: Բոլորն էլ մնացին զարմացած ու ապշած՝ նայում էին միմյանց վրա: Անկեղծորեն թագա-վորին հայտնեցին, որ դա ուժից վեր է, չեմ կարող պար-զել: Գլուխ խոնարհելով հեռացան գիտնականները: Դրա-նից հետո թագավորը ցանկացավ խորհուրդ լսել յուր երկրի ամբողջ ժողովրդից: Նա հրաման արձակեց ամ-բողջ երկրով մեկ, որ նշված օրը ամբողջ ժողովուրդը, մե-ծից մինչև կորքը, ներկայանան պալատ, դրա հետ նաև հայտարարելով եղելությունը:

Հրամանը տարածվեց ամբողջ երկողում, ժողովուրդը շտապում էր պալատ: Լուրը լսեց նաև գյուղացին, որ գտել էր զարմանալի գանգը: Վեր կացան ներկայանալու պալատ, եթե չգային, ու թագավորն իմանար, նրանց կգլ-խատեր: Փոքրիկ տղան խնդրեց իրեն էլ տանել, ասելով. «Դրա ամբողջ գաղտնիքը ես են իմանում և ուրիշ ոչ ոք»: Գյուղացին, նրա կինը, անհայր տղան ու նրա մայրը ճա-նապարհ ընկան պալատ: Քազմությունը հավաքվեց: Թա-

գավորը հայտնեց նորից յուր նպատակը: Յերթը հասավ ժողովրդին: Շատ մարդիկ խոսեցին, հայտնեցին իրենց կարծիքները, բայց թագավորը չբավարարվեց դրանցով: Եվ Վերջապես մոտեցավ անհայր Երեխան, գլուխ տալով հայտնեց, որ մինչև յուր կարծիքը հայտնելը թույլ տա մի առակ պատճել:

Եվ սկսեց. «Մի գյուղացի ուներ մի թռչուն, այդ թռչունը նրա ամբողջ սեփականությունն էր, թե տուն, թե անասուն, թե ապրուստ միայն դա էր: Մի անգամ այդ մարդը անցնում էր անտառներով: Երբ հասավ մի լեռան, նկատեց, որ քարի ճեղքից կաթկրում է դեղնավուն ջուր: Ծարավը խեղդում էր նրան, ցանկացավ թեկուզ ջուրն անորակ, խմել: Թշվար մարդը տերևներից մի ափսե է պատրաստում ու ջրով լցնում խմելու համար: Յանկարծ թռչունը կտցում ու թափում է ջուրը: Երկրորդ անգամ է լցնում, որ խմի, դարձյալ նոյն պատվին է արժանանում: Զայրանում է թշվառականը, խփում յուր մինուճար թռչունին ու սպանում: Զղայնանալուց մոռանում է ծարավը ու ցանկանում է բարձրանալ սարք... Յանկարծ տեսնում է մի ահօնելի վիշապ, որի բերանից ու քիչ ծորում է նոյն գույնի ջուր, ինչ գույնի որ քիչ առաջ ուզում էր խմել: Թշվառականը հիշեց, որ այդ ջուրը օձի թռւյն է, սկսեց ափսսալ, որ թռչունին սպանել է, որովհետև նա հանդիսացել է իր կյանքի փրկիչը: Յիմա, թագավորն ապրած կենա, դրա գաղտնիքն ասեմ, վախենում են փոշմանես: Ավելի լավ է ցրես ժողովրդին, թողնես գնան իրենց գործին»: Թագավորը մտածեց՝ գուցե լավություն է քարոզում փոքրիկը, ուստի ժողովրդին ցորւմ է:

Անցնում են օրեր, բայց թագավորի համար օրերն անցնում էին տարիների չափ, իսկ պալատը նոյն դրությամբ չմնաց, կորցրեց յուր աշխուժությունը: Թագավորը հրամայեց, որ պալատում երաժշտություն չլինի, ոչ մի ուրախություն և ոչ մի խնջույք:

Անցավ մի որոշ ժամանակ, բայց էլի այդ միտքը խեղդում էր նրան: Նա մտածում էր՝ ի՞նչ հրեշավոր երևույթ էր դա, որ տեղի ունեցավ յուր պալատում: Մտածում էր, թե ինչի համար պետք է ծովով ծիծաղի յուր հարազատ աղջ-

կա վրա: Գուցե ես գժվել եմ, գուցե աղջնակս դիմել է ինձ
խելքի բերելու համար: Նա գտնվում էր մտատանջության
մեջ, որ ահա, մոտ է յուր վախճանը, որ ամբողջ աշխարհը
ծիծաղում է յուր թագավորության վրա: Նա ցանկանում էր
հաշվեհարդար տեսնել աղջկա հետ՝ թե ինչի համար ձու-
կը պետք է ծիծաղի յուր աղջկա վրա, այլ ոչ թե սոված ծա-
ռաների կամ միմոսների վրա, որոնց վրա ծիծաղում է ամ-
բողջ ժողովուրդը: Մյուս կողմից ցանկանում է հաշվի տես-
նել յուր գիտուն մարդկանց հետ, որովհետև նրանք թագ-
ավորից ստանում էին փող, ամեն ինչ, բայց չեն կարողա-
նում բաց անել այդ կախարդական վարագույրը, որի
հետև թաքնված է այն օձը, որ միշտ կրծում է իր սիրտը:

Նա ցանկացավ նորից խորհուրդ տեսնել ժողովողի,
հատկապես այն անհայր մանկան հետ: Թագավորը նո-
րից հրովարտակ արձակեց յուր տերության մեջ, և նշված
օրը ժողովուրդը նորից հավաքվեց: Նորից մարդիկ խոսե-
ցին, նորից խորհրդակցեցին, բայց թագավորը դրանով
չքավարարվեց: Նորից հանդես եկավ անհայր տղան: Եվ
մինչև յուր կարծիքը հայտնելը նա խնդրեց պատմել մի
առակ: Թույլտվություն ստանալով թագավորից, նա սկ-
սեց. «Տեր, մի մարդու լինում է մի թութակ: Թոշունը սովո-
րություն ուներ պատմել այն, ինչ որ կատարվում էր յուր
տիրոջ բացակայության ժամանակ, իսկ տերն էլ վստա-
հություն էր ցույց տալիս ճշճարտախոս թութակին: Սի
անգամ կապում է թոշունին ներքնահարկի սյունից և ինքը
գնում աշխատանքի: Երեկոյան թոշնատերը վերադար-
նում է աշխատանքից, թութակը նրան ասում է. «Այսօր
որոտ էր, և շատ ամձրն եկավ»: Տերը բարկանում է նրա
վրա, որովհետև այդ օրը ամձրն չէր եկել: Բարկանում է
տերը ու խիում, թութակին սպանում: Այդ դեպքը պատ-
մում է կնոջը, որ սիրելի թութակին սպանել է: Կինը իր
հերթին պատմում է, որ այսօր ինքը վերին հարկում եր-
կանք է աղացել ու դրա վրա անընդհատ ջուր է լցրել՝ եր-
կանքը չնաշվելու համար: Գուցե թութակը կարծել է, թե
որոտը երկնքից առաջացած ձայն է, իսկ ջուրը կարծելով
անձրև է: Տերը խսկույն հասկանում է, որ թութակն անմեղ
է, նա ճիշտ է ասել: Ուրիշ տեղ անձրև չկար, բայց իր մոտ

անձրև էր: «Դիմա թագավորն ապրած կենա»: Երեխան շարունակում է. «Կասեմ, կփոշմանես: Ավելի լավ է ցրես ժողովրդին»: Թագավորը մտածեց՝ եթե հիմա հաշտվի, որոշ ժամանակից հետո պիտի խեղդվի այդ մտքերի մեջ: Դրանից ազատվելու համար տղային հրամայեց ինչ որ գիտե, պատմի:

- Թագավոր,- սկսեց տղան,- ինչ որ ասեմ, թող կատարեն քո հավատարիմ մարդիկ, այդ ժամանակ կհասկանաս:

- Պատրաստ ենք,- պատասխանեց թագավորը,- միայն թե ազատվենք ցավ ու տանջանքից.

Տղան կանգնեց հրապարակում և սկսեց .

- Թող քո աղջկա կանացի հագուստ հագած քառասուն ծառաները հավաքվեն մի սենյակ:

Այդպես էլ կատարվեց:

- Թող բոլորն էլ մերկանան, իրենց մարմնից դեն ձգեն կախարդիչ հագուստները:

Թագավորի կարգադրությամբ այդ էլ կատարվեց: Եվ ի՞նչ տեսան: Բոլորն էլ տղամարդիկ էին՝ աղջկա շորեր հագած, որը կատարվել էր թագավորի աղջկա նախաձեռնությամբ, յուր զվարճությունների գաղտնիքը չբացելու համար:

Ահա այն գաղտնիքը հայտնեց տղան թագավորին, որ միշտ խեղդում էր ձեզ: Ահա և քո գեղեցիկ աղջիկը՝ քառասուն տղամարդու կախարդ սիրուիհն: Նա չի վախենում քառասուն մարդուց, վախենում է մի անզոր ձկից, որը պիտի կուլ գնար քո պատվարժան աղջկան: Դրա համար էր, թագավորն ապրած կենա, որ ծովը ծիծաղեց քո աղջկան, իսկ հետո՝ աղջկա այն իժը, որ կրծում էր սիրոտ, խեղդում էր անընդհատ քեզ գահընկեց անելու համար:

Այդ լսելով, արյունով լցվեցին թագավորի աչքերը: Նա հրամայեց յուր զինվորներին ոչնչացնել նախ յուր աղջկան, իսկ հետո՝ աղջկա այն քառասուն սիրեկաններին: Այդպես էլ արին:

Իսկ անհայր տղան նորից մի գանգ է դառնում ու սկսում գլորվել, դրա հետ մեկտեղ կրկնելով. «Քառասուն զոհ եմ տվել, քառասունմեկն էլ տվի»:

Թ Շ Մ Ա Ր Տ Ա Խ Ո Ս Ը

Ասում են՝ մի գյուղացի ունենում է մի տղա՝ Յամբարձում անունով: Յամբարձումը շատ ծույզ էր, կազմվածքով գերազանցում էր բոլորին, իսկ գործի մեջ հետ էր մնում բոլորից: Տղայի հայրը մտածում է՝ մինչև ե՞րբ պիտի տղան այդպես շարունակի:

Հայրը ծերության տարիքում էր, մի ոտք համարյա գերեզմանում էր, ու խորհում էր՝ իր մեռնելուց հետո ո՞վ պիտի Յամբարձումի համար հաց վաստակի: Եվ ստիպում է տղային, որ առավոտյան շուտ վեր կենա, գնալու են վար անելու:

Երբ աքաղաղները կանչում են, հողի մշակները զարթնում են ու ճանապարհ ընկնում դեպի արտ: Սկսում են վարը: Որոշ ժամանակից հետո հայրը հանձնարարում է որդուն, որ հողը վարի մենակ, ինքը գնալու տեղ ունի: Հայրը գնում է: Յամբարձումը սկսում է վարել՝ մերք նստելով, մերք հորանջելով: Դեռ մի քանի ակոս չարած, խոփը դեմ է առնում ինչ-որ բանի: Յամբարձումը կանգ է առնում և սկսում փորել հողը և տեսնում մի զարմանալի բան: Մի կարաս՝ ամբողջովին ոսկով լիքը: Շատ զարմացած, տղան ցանկանում է գոռալ ու հայտնել հորը անսպասելի գյուտի մասին, բայց իրեն զապում է. Եթե հորը հայտներ, ապա հայրը կստիպեր շալակել ոսկին: Նա սկսում է արագ առաջ քշել եզները, հետևին թողնելով ոսկու կարասը, բաղված ևս ակոմների մեջ:

Այդ ժամանակամիջոցին տղան նկատում է երեք ձիավոր: Տեսնելուն պես կանգ է առնում ու սկսում ճամփորդներին հարցեր տալ: Ահա նրանցից մեկը.

- Եթե իմացաք, թե այս եզր այն եզան ինչն է,- դիմեց Յամբարձումը,- ես մի բան ունեմ, ամբողջովին ձեզ կտամ:

ճամփորդները շատ են զարմանում Յամբարձումի տված հարցից, քնծիծաղ են տալիս, բայց վերջում լուրջ դեմք են ընդունում ու ճանապարհ ընկնում, վերցնելով իրենց հաշիվը:

Որոշ տարածություն անցնելուց հետո նորից Յամբարձումը աղաղակում է ծիավորների հետևից, թե՝ հետ եկեք լուրջ խնդրի համար: Չիավորները հետ են գալիս, սպասում էին նոր հետաքրքրող հարցին, բայց նրանց գլխին տեղում է այն, ինչ որ սկզբում:

Չիավորները կատաղում են ու սկսում մի լավ՝ տուր թե կտաս:

- Ո՞նց թե, այս եզր նրա ինչն է,- և ասում էին, և ծեծում,- ո՞նց թե մի բան ունեմ, ձեզ կտամ,- և ասում էին, և գզում... ինչ է, մենք քո ծաղրատե՞ղն ենք, տոպրակ, տոպրակի տղա: Ծակ այսուրապարկի նման փսխում ես... Ասում էին ու տմբգում, տմբգում էին ու ծիծաղում, ծիծաղում էին ու չորս կողմ նայում:

Չիավորներն իրենց կարծիքն են կազմում ու ճանապարհ ընկնում: Անցնում են ահագին տարածություն, բայց նորից են լսում նույն ձայնը: ճամփորդները նորից հետ են դաշնում Յամբարձումի մոտ:

- Այ' մարդիկ, բա սկի խիղճ չունե՞ք: Դուք գրագետ մարդիկ եք, փորձված: Ես ձեզ կարգին բան ասացի, որ բան հասկանամ, տես՝ այսօրվա իմ վարը հետ քողեցիք: Քիմա էն են ասում, եթե իմացաք, թե այս եզր այն եզան ինչն է, այն ժամանակ մի բան ունեմ, ամբողջովին ձեզ են տալու:

Չիավորները նորից են կատաղում ու սկսում նորից առուտուր անել Յամբարձումի հետ, տասը տալիս էին, հազիվ մեկ ստանում, քսան տալիս էին, մի «վայ» լսում, հիսուն տալիս էին, մի՝ «վայ մեռա» լսում: Թիչ մնաց, որ եզներին էլ սպանեն:

Ճամփորդները հեռանում են: Յամբարձումը խելքը

գլուխն է հավաքում ու սկսում եզներին փնտրել: Գտնելով
եզները, սկսում է նորից քառշ գալ արորի հետևից, որ-
պեսզի հայրը չիմանա եղելության մասին: Հայրը գալիս է:

Քիչ վարելուց հետո վերադառնում են տուն:
Երեկոյան Համբարձումը վիզը ծռած, դիմում է հորը.
- Հայր, մի բան ասեմ, շատ օգտավետ, բայց որ ասեմ,
վախենում եմ շալակ տաք:
- Ի՞նչ բան է,- ասում է հայրը,- դրանից արխային մնա,
քեզ չենք անհանգստացնի:

Պատմում է տղան ոսկու մասին ու հայտնում, որ երեք
ձիավոր ցանկանում են խլել ձեռքից, բայց կռվում է
նրանց հետ ու հաղթում:

Առավոտյան գնում են արտ, վերցնում ոսկիները, բայց
տակը մի քիչ մնում է: Խնդրում են Համբարձումին, որ նա
տանի թագավորի համար: Վերադառնում են տուն:

Երեկոյան Համբարձումը ոսկին լցնում է տոպրակը ու
դնում գլխատակին:

- Ահագին ոսկի է, թագավորը հարուստ է, անքանակ
ոսկիների տեր,- մտածում է Համբարձումի մայրը,- բա ին-
չո՞ւ թագավորը գոնե մի հատ ոսկի չի տալիս սոված որ-
բերին:

Գիշերը մայրը վեր է կենում, ոսկին թափում տոպրա-
կից ու փոխարենը քարեր ու աղյուսներ է լցնում ու նորից
դնում տեղը:

Հետևյալ օրը Համբարձուը հասնում է պալատ, թագա-
վորին հայտնում, որ ոսկի է բերել նրա համար: Թագավո-
րը «բարերարին» ներս է հրավիրում: Համբարձումը բաց
է անում տոպրակի բերանը ու թափում «ոսկին»: Զարմա-
նում է տղան, երբ ոսկու տեղ տեսնում է քարեր ու աղյու-
սի կտորներ, իսկ թագավորը կատարում է: Հրամայում է,
որ տղային գցեն մի գոմ: Այդպես էլ անում են:

Օրերից մի օր ծառաները տեսնում են, որ Համբարձու-
մը գժություններ է անում, ձեռքերը վեր ու վար է բարձ-

րացնում, փորն էլ ուռեցնում, օդով լցնում բերանը, հետաքրիր ծիծաղում, ձեռքերը տարածում և տարբեր շարժումներ անում:

Ծառաները մոտենում են նրան ու հարցնում.

- Ի՞նչ ես անում, Յամբարձում, գմկե՞լ ես, ինչ է:

- Գիծը դուք եք, որ գերի եք դառել նրա ձեռքին,- գոռում է Յամբարձումը:- Ես թագավորի ու թագուհու մարմնի ձևերն եմ ցույց տալիս, չափում եմ նրանց գլուխը, որ մի մեծ դազանի չափ կլինի, չափում եմ, ցույց եմ տալիս նրանց փորը, որ նման է մի ուռած տակառի, բերաններն եմ ցույց տալիս, որ նման է փշած պարկի:

Ծառաները հայտնում են թագավորին, թե բանտարկյալն անհասկանալի շարժումներ է անում: Թագավորը հրավիրում է տղային իր մոտ:

Յամբարձումն ասում է.

- Թագավոր, ապրած կենա կուռդ, իմձ գցել ես այն հոտած գոմը, շունն անգամ կսատկի գարշելի հոտից: Ես չեմ, դու ես, ինչպե՞ս կանես այն դրույթան մեջ:

Թագավորը հրամայում է Յամբարձումին գցել մի մարագ ու կենդանի այրել:

Յամբարձումին գցում են մի մարագ, տեսնում են, որ նույն շարժումները կրկնում է: Նորից են հարցնում ծառաները, թե ինչու է այնպես անում: Նրան կենդանի այրում են: Նա չպիտի ծիծաղի, այլ լաց ու կոծ անի:

- Այ մարդ,- հարցնում են շրջապատող մարդիկ, դու գմկե՞լ ես, ինչ է:

- Գիծը դուք եք, որ գերի եք դառել նրա ձեռքին,- նորից գոռում է Յամբարձումը,- ես թագավորի ու թագուհու փորն եմ ցույց տալիս, որ Մասիսն անգամ կամաչի երևալ նրանց աչքին: Փղերն ամաչելուց դրւուս չեն գա անտառից, որովհետև վզերի մրցության ժամանակ իրենք զիշեցին թագավորին, իսկ հետո՝ թագուհուն:

Ծառաները հայտնում են թագավորին, որ Յամբար-

ձումն անհմաստ շարժումներ է անում: Թագավորը հրա-
մայում է բերել իր մոտ: Այդպես էլ անում են:

Դամբարձումը թագավորին հայտնում է.

- Թագավոր, ես աղաջում էմ քեզ ուշադիր լսես: Զար-
մանալի բան է, ինձ գցել են մարագը ու կրակի մատնել
չորս կողմը, բա ծուխը ինձ չի խեղդի⁹: Ես ասել եմ, որ թա-
գավորը մի «ազատարար փրկիչ» մարդ է, ասացի, դու ել
ազատեցիր ինձ,- ասում է Դամբարձումն ու դուրս է գնում:

Թագավորը ոչինչ չի ասում, թեքև ժպտում է ու խոր-
հում. «Այս երիտասարդն ավելի խելոք է, քան ին ծաղրա-
ծուները»:

Յ.Գ. Դեքիաբները պատմել է 80 տարեկան պապ՝
Դայրապետ Գրիգորյանը: Գրական նշակումն իմն է:

Սուրեն ԽԱՆՅԱՆ
1940թ.

Բովանդակություն

Առաջարանի փոխարեն

1.Տասնինամյա իմ ավագ եղբայրը 3

2.Սուրեն Խանյանի նամակները 12

Բանաստեղծություններ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

3.Հայրենիք 20

4.Թեզ եմ պարտական 21

5.Երկրիս համար 21

6.Հայրենիքիս թշնամիներին 22

7.Ասա տեսնեմ 23

8.Մեր հին գյուղը 24

9.Մեր նոր գյուղը 25

10.Արտեր 26

ՄԻՐՈ ԹԵՎԵՐԸ

11.Մերը թևերն է մարդու 27

12.Կարմիր վարդը 29

13.Արի, միրուիխ 29

14.Ինչպե՞ս մոռանամ 30

15.Օրեր Եկան վառ գարնան 31

16.Ինչպես ուռին... 31

17.Սիրո տողեր 32

ԽՈՇԵՐԻ ԱՇԽԱՐԴՈՒՄ

18.Ռերթը մերն է 33

19.Ճրագիս հետ 33

20.Հորս կտակը 34

21.Սորս կտակը 34

22.Արծվին 35

23.Մեր գյուղի մոտ 35

24.Կեցցես, անմահ ֆիրդուսի 36

25.Մաքսիմ Գորկի 37

ՄԱՆԿԱԿԱՆ

26.Ծիտն ու տղան 39

27.Մանուկներն ու գարունը 40

28.Էշն ու գայլը 42

ՔԱՂՅԱԿՆԵՐ՝ 45

ՀԵԹԻԱԹՆԵՐ

29.Քառասուն զոհ տվել եմ, քառասունմեկն էլ կտամ 52

30.ճշմարտախոսը 58

31.Բովանդակություն 63

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԼԱՐԻ ԽԱՆՅԱՆ

ՔՈ ԶԻՆՎՈՐՆ ԵՍ

(Նամակներ, բանաստեղծություններ, հեքիափներ)

СУРЕН АГАЛАРОВИЧ ХАНЯН

Я ТВОЙ СОЛДАТ

(Письмы, стихотворения, сказки)

Редактор- Сократ Агаларович Ханян

Խմբագիր՝

Սրբագրիչ՝

Նամակարգչային շարվածքը՝

Նամակարգչային էջադրումը՝

Սովորական ԽԱՆՅԱՆ

Սերո ԽԱՆՅՈՒՆՑ

Նորա ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Ալբերտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Տպագրեսակը՝ «Arial Armenian»:

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Զարմանակը՝ 60x841/16:

Ծավալը՝ 4 տպ. նամուլ+4 էջ ներդիր: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» իրատարակչության տպարանում

Հ.Հակոբյան, 25

Ստեփանակերտ -2014